



ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՏՈՒԺԱԾ ԿԱՆԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Այս հետազոտության բովանդակության համար պատասխանատու է միմիայն Վորլդ Վիժն Հայաստանը, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

I. Բովանդակություն

I. Բովանդակություն	2
II. Երախտիքի խոսք	3
III. Հավաստագիր	4
IV. Հապավումների բառարան	5
V. Ներածություն	6
1. Հետազոտության նպատակ	8
2. Հետազոտության խնդիրները	10
3. Տեղեկատվության առաջնային կարիքներ	11
4. Մեթոդաբանություն	14
5. Հետազոտության առանցքային բացահայտումներ	16
5.1 Մասնակիցներ	16
5.2 Կարիքների համապատասխանություն	20
5.3 Պատերազմից տուժած կանանց և աղջիկների վերականգնում և ինտեգրում	36
5.4 Պատերազմից տուժած կանանց ընկալումները ՄԱԿ ԱԽ 1325-ի վերաբերյալ	45
5.5 Կայունություն	48
6. Եզրակացություններ	52
7. Առաջարկություններ	54
8. Հավելվածներ	58
I. Հավելված: Հետազոտության տեխնիկական առաջադրանք	58
II. Հավելված: Ընտրանքի բաշխում	59
III. Հավելված: Մեկնարկային հաշվետվություն	60
IV. Հավելված: Հետազոտության գործիքներ	61

II. Երախտիքի խոսք

Մենք ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել բոլոր նրանց, ովքեր աջակցել են Այ Էմ Ար թիմին «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» (ՀՀՄԾ) ծրագրի շրջանակներում իրականացվող ուսումնասիրության շրջանակներում: Նախ և առաջ մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում բոլոր ոգեշնչող և խիզախ աղջիկներին ու կանանց, ովքեր մեծահոգաբար իրենց ժամանակը տրամադրեցին և մասնակցեցին այս ուսումնասիրությանը: Ծնորհակալություն մեզ հետ ձեր պատմությունները կիսելու և ձեր փորձառությունների մասին պատմելու համար, որոնցից մի քանիսը շատ դժվար էր վերաշարադրել:

Մենք ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին և սոցիալական աշխատողներին, ովքեր պատրաստակամորեն տրամադրեցին իրենց ժամանակը՝ կիսվելով պատերազմից տուժած կանանց սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցման և ինտեգրման վերաբերյալ իրենց անգնահատելի փորձով:

Ծնորհակալություն նաև Այ Էմ Արի հավաքագրման թիմին՝ հարցազրույցները և ֆոկլուս-խմբային քննարկումները պատշաճ կերպով կազմակերպելու իրենց անգնահատելի աշխատանքի համար:

Մենք ցանկանում ենք մեր հատուկ շնորհակալությունը հայտնել Վորլդ Վիժնին և հատկապես հետևյալ անձանց, որոնց ներդրումը կենսական նշանակություն ունեցավ ուսումնասիրության նախագծման և վերլուծության համար. Սևան Պետրոսյանին՝ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» ծրագրի ղեկավարին, Անուշ Ծախսովարյանին, ՄԳՀՈԻ համակարգողին, Աննա Սաֆարյանին, ՀՀՄԾ ծրագրի շահերի պաշտպանության գծով պատասխանատու:

Ցանկանում ենք նաև մեր երախտագիտությունը հայտնել Երևանի քաղաքապետարանի աշխատակից Տաթևիկ Ավետիսյանին, ում աջակցությամբ ապահովվեց սահուն հաղորդակցությունը Երևանի համայնքային կառույցների ներկայացուցիչների և սոցիալական աշխատողների հետ, առանց որի մենք չէինք կարողանա ուսումնասիրությունն ավարտել սահմանված ժամկետներում:

III. Հավաստագիր

Բացառությամբ այն դեպքերի, որոնք հաստատվում են այս փաստաթղթում այլ հեղինակների և հրապարակումների հղումներով, այս Վերջնական գեկույցը մեր սեփական աշխատանքն է, որը նվիրված է պատերազմից տուժած կանանց սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման և ինտեգրման ուսումնասիրությանը:

Աննա Թադևոսյան, նախագծի ղեկավար, Այ Էմ Ար
Ապրիլ 2023

IV. Հապավումների բառարան

CATI	Համակարգչային օգնությամբ հեռախոսային հարցազրույցներ
ՄՉՀ	Մանկական զարգացման հիմնադրամ
ՀՀՄԾ	Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ
ԱՌՆԱՊ	Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ
ՖԽԲ	Ֆոկուս խմբային քննարկում
ՄՀ	Մեկնարկային հաշվետվություն
ԱՏՀ	Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույց
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՊԶԿ	Պատերազմից տուժած կանայք
PM	Նախագծի ղեկավար
ՍԱ	Սոցիալական Աշխատող
ԹԼ	Թիրախային լսարան
TAPI	Պլանշետների օգնությամբ անհատական հարցազրույց
TOR	Տեխնիկական առաջարկ
ՄԱԿ	Միացիալ ազգերի կազմակերպություն
ՄԱԿ-ի ԱԽԲ	ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեռ
ՄՍԾ	Միացյալ սոցիալական ծառայություն
ՊՏԿ	Պատերազմից տուժած կանայք
ԿԽԱ	Կանայք, խաղաղություն և անվտանգություն
ԿԱԿ	Կանանց աջակցության կենտրոն
ՎՎ	Վորլդ Վիժն

V. Ներածություն

Սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանում պատերազմից տուժած կանանց սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման և ինտեգրման ուսումնասիրության արդյունքները՝ համաձայն Վորլդ Վիժն Հայաստանի (ՎՎ) կողմից մշակված տեխնիկական առաջադրանքների (ՏԱ) պահանջների ([Stu հավելված #1](#)): Ուսումնասիրությունը պատվիրվել է ՎՎ Հայաստանի կողմից «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի (ՀՀՄԾ) շրջանակներում և իրականացվել է Այ Էմ Ար հետազոտական ընկերության կողմից 2023 թվականի փետրվար-մարտ ամիսներին: Հետազոտության շրջանակներում իրականացվել են 550 քանակական հարցումներ տեղահանված կանանց հետ, 6 ֆոկլուս խմբային քննարկում (ՖԽՔ) ներկայումս Հայաստանում բնակվող պատերազմից տուժած կանանց (ՊՏԿ) և պատերազմից չտուժած կանանց (ՊՉԿ) հետ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) 20 ներկայացուցիչներ և սոցիալական աշխատողներ (ՄԱ):

Ուսումնասիրության նպատակն է ավելի լավ պատկերացում կազմել հայ համայնքներում պատերազմից տուժած կանանց և աղջիկների (տեղահանված, գոհված և վիրավոր ընտանիքի անդամներ ունեցող) ինտեգրման ու սոցիալ-հոգեբանական վերականգնման հեռանկարների մասին՝ համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի (ՄԱԿ-ի ԱԽԲ), ինչպես նաև գնահատել համայնքային ՄԱ ներգրավվածությունն ու դերը նշված կանանց ինտեգրմանն ուղղված աշխատանքներում, ինչպես նաև դրանց արդյունավետությունը: Հետազոտության արդյունքները նպաստելու են գոյություն ունեցող/ապագա քաղաքականությունների և նախագծերի ամրապնդման/ձևավորման վերաբերյալ առաջարկություններին, ինչպես նաև ՎՎ-ի և գործընկերների գործունեությանը, որոնք վերաբերում են պատերազմից տուժած կանանց:

Հետազոտության թիրախային խմբերն են պատերազմից տուժած կանայք և աղջիկները (տեղահանված և/կամ գոհված և վիրավորված ընտանիքի անդամներ ունեցող), տվյալ համայնքի պատերազմից չտուժած կանայք և աղջիկները (ՊՉԿ), համայնքային ՄԱ, ՏԻՄ ներկայացուցիչները:

Ուսումնասիրության արդյունքների հիմնական շահագրգիռ կողմերն են՝ ՎՎ Հայաստանը, ԱՄՆԶԳ, Մանկական Չարագցման Հիմնադրամը (ՄՉՀ), Կանանց աջակցության կենտրոնը (ԿԱԿ), Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմը (ԱՌՆԱՊ) և ազգային կառավարության այլ անդամներ:

Վերջնական հաշվետվության վերանայման և որակի ապահովման գործընթացը երաշխավորվում է ՎՎ-ի համապատասխան անձնակազմի վերանայման միջոցով, մասնավորապես՝ ՀՀՄԾ և «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» նախագծերի թիմերի փորձով:

Ուսումնասիրության իրականացման ընթացքում թիմը հետևել է Վորլդ Վիժնի նախագծման, մոնիտորինգի և գնահատման ուսուցման համակարգի բոլոր համապատասխան պահանջների վրա: Ապահովվել են ուսումնասիրությունների տվյալների պաշտպանության, գաղտնիության, անանունության և արխիվացման

սկզբունքներին: Քայլեր են ձեռնարկվել խոցելի և մարգինալացված խմբերի կարծիքը հետևողականորեն գրանցելու ուղղությամբ:

I. Հետազոտության նպատակ

1990-ականներից ի վեր կանանց մասնակցության մեծացումը և գենդերային հեռանկարների ներառումը խաղաղության և անվտանգության հարցերում եղել են Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից ձեռնարկված մի շարք նախաձեռնությունների ուշադրության կենտրոնում: Այս օրակարգն առաջ մղելու ամենակարևոր բեկումը Անվտանգության խորհրդի 1325 (ՄԱԿ 1325) բանաձևի ընդունումն էր, որը վերաբերում է կանանց, խաղաղությանը և անվտանգությանը (ԿԽԱ), որը ընդունում է, որ կանանց իրավունքները կենսական նշանակություն ունեն խաղաղության և արդարության հասնելու համար: Այս բանաձեռնը դարձել է այն նորմատիվ շրջանակը, որի ներքո մշակվում են նոր նախաձեռնություններ: Հետագայում, ՄԱԿ-ի 1325-ի սկզբունքները դարձել են ՄԱԿ-ի 193 անդամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի առաջնահերթություններից մեկը, որոնց պետք է հասնեն մինչև 2030 թվականը: Այսպիսով, Հայաստանում մշակվել է 2022-2024 թվականների Ազգային գործողությունների ծրագիր՝ իրականացնելու ՄԱԿ-ի ԱԽԲ 1325 սկզբունքները:

Գործողությունների ծրագիրը անդրադառնում է 2020 թվականի աշնանը Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններում տեղի ունեցած պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված կանանց և աղջիկների առջև ծառայած խնդիրներին և մարտահրավերներին: Ազդեցիկ պատերազմի արդյունքում զոհվել է ավելի քան 80 խաղաղ բնակիչ, որոնցից 12-ը կանայք են եղել, մեծամասնությունը՝ տարեցներ: Ազդեցիկ պատերազմի արդյունքում ավելի քան 91 հազար մարդ, որոնց 88 տոկոսը կանայք և երեխաներ են, բռնի տեղահանվել և ապաստան են գտել Հայաստանում: Ուժի կիրառումը բացասաբար է ազդել տարածաշրջանային կայունության վրա՝ վտանգելով հարյուր հազարավոր մարդկանց կյանքն ու առողջությունը: Ազդեցիկ պատերազմը սկսվել և մղվել է ԲՈՎԻԴ-19 համաճարակի պայմաններում՝ դրանով իսկ ավելի բարդացնելով կանանց և աղջիկների վիճակը:

Գործողությունների ծրագիրը հիմնված է ՄԱԿ ԱԽԲ 1325-ի հիմնական սյուների վրա՝ «Մասնակցություն», «Պաշտպանություն», «Կանխարգելում», «Վերականգնում և Աջակցություն»:

2021 թվականից Հայաստանում մեկնարկել է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» բաղադրիչի իրականացումը «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» (ՀՀՄԾ) ծրագրի շրջանակներում: ՀՀՄԾ-ն ֆինանսավորվում է ԱՄՆՄԶԳ-ի կողմից և իրականացվում է ՎՎ Հայաստան կազմակերպության կողմից՝ ՄԶՀ-ի, ԿԱԿ-ի և ԱՌՆԱՊ հիմնադրամի հետ: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել հակամարտությունից տուժած կանանց հոգեբանական վերականգնմանը և ինտեգրմանը:

Վերջինիս արդյունավետ իրականացման և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման ու զարգացման համար ՀՀՄԾ նախագծի շրջանակներում որոշվել է իրականացնել ուսումնասիրություն, որի նպատակը սահմանված է ՎՎ-ի կողմից ներկայացված երկու ՏԱ-ներում ([Տես Հավելված #1](#)): Այսպիսով, ուսումնասիրությունը նպատակ ունի ավելի լավ պատկերացում կազմել հայ համայնքներում ՊՏԿ-ների (տեղահանված, զոհված և վիրավորված ընտանիքի անդամներ ունեցող) ինտեգրման

և սոցիալ-հոգեբանական վերականգնման հեռանկարների մասին՝ համաձայն ՄԱԿ ԱԽԲ 1325-ի, ինչպես նաև պարզել, համայնքի սոցիալական աշխատողի ներգրավվածությունը նշված կանանց ինտեգրմանն ուղղված աշխատանքներում և դրա արդյունավետությունը: Ուսումնասիրությունը նպատակ ուներ նաև հիմք ստեղծել գոյություն ունեցող/ապագա քաղաքականությունների և նախագծերի ամրապնդման/ձևավորման, ինչպես նաև ՎՎ-ի և ՊՏԼ-ին առնչվող գործընկերների գործունեության համար առաջարկություններ ձևավորելու համար:

2. Հետազոտության խնդիրները

Ելնելով ուսումնասիրության նպատակից՝ հետազոտական թիմի առջև դրված են եղել հետևյալ խնդիրները:

- Ուսումնասիրել ՊՏԿ-ների առջև ծառայած մարտահրավերները հայկական համայնքներում, ինչպիսիք են տեղահանումը, ընտանիքի անդամների կորուստը և վնասվածքները, ու բացահայտել այդ փորձառությունների սոցիալական և հոգեբանական հետևանքները:
- Ուսումնասիրել հայկական համայնքներում ՊՏԿ-ների ինտեգրմանն ու վերականգնմանն ուղղված ընթացիկ պրակտիկան և գործողությունները, ներառյալ սոցիալական աշխատողների դերն այս ջանքերում:
- Գնահատել հայկական համայնքներում ՊՏԿ-ների համար առկա ինտեգրման և վերականգնողական ծրագրերի արդյունավետությունը՝ սոցիալական և հոգեբանական բարեկեցությունը, հզորացումն ու համայնքի վերաինտեգրումը խթանելու նրանց կարողության տեսանկյունից:
- Բացահայտել լավագույն փորձը և առաջարկությունները՝ բարելավելու սոցիալական աշխատողների ներգրավվածությունը ՊՏԿ-ների՝ հայաստանի համայնքներում ինտեգրման և վերականգնման գործում՝ համաձայն ՄԱԿ ԱԽ 1325 սկզբունքների:
- Մշակել առաջարկություններ հայկական համայնքներում ՊՏԿ-ի և աղջիկների համար կայուն և արդյունավետ ինտեգրման և վերականգնման համար, որը հաշվի է առնում նրանց հատուկ կարիքներն ու մարտահրավերները:

Մինևույն ժամանակ, ուսումնասիրությունը հիմնված է ՊՏԿ-ների, ինչպես նաև ՊԶԿ-ների (չտեղահանված և գոհ կամ վիրավոր ընտանիքի անդամ չունեցողների) անհատական փորձառությունների վերաբերյալ ընկալումների վրա, նաև համայնքի մակարդակով խնդիրները հաղթահարելու իրենց կարողության մասին տեղեկատվությունը և պատերազմի ու դրա հետևանքների ժամանակ քաղաքական մթնոլորտի ազդեցության մասին: Այն արտացոլում է կանանց տեսակետները պատերազմի ժամանակ իրենց դերի վերաբերյալ և նրանց ընկալումը խաղաղության մեջ ներգրավվելու իրենց հանձնառության մասին (եթե այդպիսիք կան), այսինքն՝ ՊՏԿ-ների մասնակցությանը համայնքային զարգացմանը, պաշտպանությանը պատերազմի և տեղահանման ժամանակ, գնահատում է տեղական ծառայություններ մատուցողների դերը գենդերազգայուն սոցիալական ծառայությունների ապահովման հարցում: Ուսումնասիրությունը անդրադառնում է նաև 2022-2024 թթ ազգային գործողությունների երկրորդ ծրագրին՝ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» ՄԱԿ-ի ԱԽԲ N1325-ի դրույթների իրականացմանը և ազգային ծրագրի նպատակներին՝ սահմանելու ծրագրի իրականացման ժամանակացույցը:

3. Տեղեկատվության առաջնային կարիքներ

Առաջնային տեղեկատվական կարիքներն ըստ կատեգորիաների ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Տեղեկատվության առաջնային կարիքներ.

Տեղեկատվության առաջնային կարիքների կատեգորիաներ	Տեղեկատվության առաջնային կարիքներ –Առանցքային հարցեր	Տեղեկատվության հավաքագրման միջոցներ
Կարիքների համապատասխանություն	<ol style="list-style-type: none"> Ո՞րն է ՊՏԿ-ների համար անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական ծառայությունների շրջանակը: Ինչպիսի՞ ընդունելություն և աջակցություն են ստացել ՊՏԿ-ների իրենց ժամանելուն պես և դրանից հետո տվյալ համայնքում: Որքա՞ն տեղին էին ծրագրի միջամտությունները ՊՏԿ-ների կարիքների հետ կապված՝ ժամանելուն պես և դրանից հետո: 	ՖԽՔ և CATI ՊՏԿ- ՆԵՐԻ հետ ԱՏՀ ՍԱ հետ
ՊՏԿ- ՆԵՐԻ վերականգնում և ինտեգրում	<ol style="list-style-type: none"> Ինչպիսի՞ քաղաքականություններ, գործառնական մեթոդներ և համակարգեր են իրականացվել համայնքային սոցիալական աշխատողների կողմից՝ ապահովելու ՊՏԿ-ների վերականգնումը և ինտեգրումը: Ի՞նչ չափով էր համայնքի սոցիալական աշխատողների արդյունավետ ՊՏԿ-ների վերականգնման և ինտեգրման ապահովման գործում: Որո՞նք են այն հանգամանքները, որոնք խոչընդոտում են ՊՏԿ-ների ինտեգրմանը համայնք: Ինչպիսի՞ ուղղորդման մեխանիզմներ կան ինտեգրման համար: Ի՞նչ խնդիրներ կան վերը նշված մեխանիզմների հետ կապված: 	ՖԽՔ և CATI ՊՏԿ-ների հետ ԱՏՀ ՍԱ-ների հետ ՖԽՔ ՊՉԿ-ների հետ
Գործունեության	<ol style="list-style-type: none"> Ո՞րն էր համայնքի 	ՖԽՔ և CATI

<p>արդյունավետություն</p>	<p>սոցիալական աշխատողների ներգրավվածության արդյունավետությունը ՊՏԿ-ների ինտեգրման հետ կապված աշխատանքներում:</p> <p>10. Ո՞րն էր կիրառված քաղաքականության և մեթոդների արդյունավետությունը:</p> <p>11. Որո՞նք էին կիրառվող քաղաքականության և մեթոդների խնդիրները:</p> <p>12. Որքա՞նով էին մատուցվող ծառայությունները արդյունավետ:</p> <p>13. Ի՞նչ խնդիրներ կային մատուցվող ծառայությունների հետ կապված:</p> <p>14. Ինչպիսի՞ն է եղել մատուցվող ծառայությունների ազդեցությունը կանանց վերականգնման և համայնքում ինտեգրման վրա:</p>	<p>ՊՏԿ- ների հետ ՖԻՔ ՊՉԿ-ների հետ</p>
<p>ՊՏԿ ընկալումները ՄԱԿ ԱԽ 1325-ի վերաբերյալ</p>	<p>15. Ինչպիսի՞ն է եղել ՊՏԿ-ների և ՊՉԿ-ների անձնական փորձը համայնքային մակարդակի խնդիրների լուծման համար:</p> <p>16. Ինչպե՞ս են ՊՏԿ-ների ընկալում իրենց ներգրավվածությունը պատերազմական և հետպատերազմյան համատեքստում (մասնակցություն տեղական զարգացմանը, պաշտպանություն պատերազմի ժամանակ և տեղահանում):</p> <p>17. Ինչպիսի՞ն են կանանց տեսակետները տարածաշրջանում քաղաքական մթնոլորտի փոփոխության և խաղաղության հաստատման գործում իրենց դերի վերաբերյալ:</p> <p>18. Արդյո՞ք նրանք սոցիալական ծառայություններ են ստացել տեղական ծառայություններ մատուցողներից այս</p>	<p>ՖԻՔ և CATI ՊՏԿ- ների հետ ՖԻՔ ՊՉԿ-ների հետ</p>

	<p>հարցում:</p> <p>19. Որքանով էր դա օգտակար: Ինչպե՞ս են օգտագործել այն:</p> <p>20. Ի՞նչ կարող են անել տեղական ծառայություններ մատուցողները՝ օգնելու նրանց այս հարցերում:</p> <p>21. Արդյո՞ք սուկա է գենդերազգայուն սոցիալական ծառայությունների մատուցման կարիք:</p>	
<p>Կայունություն</p>	<p>22. Ինչպե՞ս են կանայք տեսնում իրենց ապագան հյուրընկալող համայնքներում:</p> <p>23. Ինչպիսի՞ քաղաքականություններ, գործառնական մեթոդներ և համակարգեր պետք է օգտագործվեն համայնքի ՄԱ կողմից՝ ապահովելու ՊՏԿ-ների սահուն վերականգնումը և ինտեգրումը:</p> <p>24. Լրացուցիչ ի՞նչ սոցիալական ծառայություններ կարող են օգնել ՊՏԿ-ների սոցիալ-հոգեբանական և տնտեսական վերականգնման և ինտեգրման հարցում:</p> <p>25. Ի՞նչ դեր ունի համայնքի ղեկավարությունը և ի՞նչ կարող է նրանք անել՝ օգնելու ՊՏԿ-ների սոցիալ-հոգեբանական և տնտեսական վերականգնման և ինտեգրման հարցում:</p> <p>26. Ի՞նչ դեր ունեն ՊՉԿ-ների և ի՞նչ կարող են նրանք անել՝ օգնելու ՊՏԿ-ների սոցիալ-հոգեբանական վերականգնման և ինտեգրման համար:</p>	<p>ՖԻՏՔ և CATI ՊՏԿ- ների հետ ԱՏՀ ՄԱ-ների հետ ՖԻՏՔ ՊՉԿ-ների հետ</p>

4. Մեթոդաբանություն

Ուսումնասիրության մեթոդաբանությունը հիմնվել է **խառը մեթոդների մոտեցմանը**, որի շրջանակներում համատեղվել են առաջնային տվյալների հավաքագրման **քանակական և որակական մեթոդները**՝ հարուստ պատկերացումներ ձեռք բերելու, հետազոտության բոլոր խնդիրները պարզելու և տվյալների աղբյուրների ու դրանց հավաքագրման մեթոդների տրիանգուլյացիա ապահովելու համար: Այսպիսով, հետազոտության շրջանակում օգտագործվել են **տվյալների քանակական հավաքագրման մեթոդաբանությունը, կիսաձևայնացված առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցները (ԱՏՀ) և ֆոկուս-խմբային քննարկումները (ՖԽՔ)**: Հետազոտության ռազմավարության առումով որակական հարցազրույցները միտված են եղել հետազոտության տվյալները լրացնել հարուստ և չստանդարտացված տվյալներով՝ այդպիսով ստանալով ընդհանուր առմամբ ավելի հարուստ և հստակ պատկեր:

Հետազոտության թիրախային խմբերի ընտրանքը սահմանելու համար կիրառվել են ֆիլտր չափանիշներ: Հիմնական ֆիլտր չափանիշները հետևյալն էին. (ա) բնակության վայրը (Երևան, այլ քաղաքային և գյուղական); բ) տեղահանված կամ պատերազմից տուժած լինելու փաստը. գ) ընտանեկան դրությունը (ամուսնացած, չամուսնացած) և (դ) տարիքային խումբը (քանակական՝ 18+ և որակական՝ 25-45 տարեկան): Հաշվի են առնվել նաև որոշ երկրորդական չափանիշներ՝ տվյալ համայնքում առնվազն 6 ամիս ապրելու հանգամանքը, կրթությունը եւ այլն:

Ուսումնասիրության շրջանակներում **556 քանակական հեռախոսային հարցազրույցներ** են իրականացվել տեղահանված կանանց հետ- **ԹԼ1** (241-ը Երևանում և 315-ը՝ մարզերում): Ի սկզբանե քանակական ուսումնասիրության համար նախատեսված էր հարցազրույցները իրականացնել դեմ առ դեմ պլանշետների միջոցով, սակայն մերժումների քանակը բավականին բարձր էր և ազդում էր դաշտի ժամանակացույցի վրա, ուստի որոշում կայացվեց ընտրել այլընտրանքային պլանավորված մեթոդը՝ CATI, որն օգնեց դաշտային փուլն առավել հարթ իրականացնել: Քանակական հարցազրույցներն անցկացվել են 18+ տեղահանված կանանց և աղջիկների հետ Երևանում և մարզերում (ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում):

Իրականացվել է **6 ՖԽՔ**՝ պատերազմից տուժած-**ԹԼ2 (4ՖԽՔ)** և պատերազմից չտուժած կանանց հետ-**ԹԼ3 (2ՖԽՔ)** յուրաքանչյուր ՖԽ-ում 7-8 մասնակից և **20 ԱՏՀ-ԹԼ4**: ՖԽՔ-ներում ընդգրկվել են 25-45տ. կանայք և աղջիկներ, ովքեր կամ տեղահանվել են, կամ իրենց ընտանիքում ունեցել են զոհ կամ զինհաշմանդամ: 20 ԱՏՀ-ն իրականացվել են սոցիալական աշխատողների՝ **ԹԼ4.1** (10ԱՏՀ) և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ Երևանից (6) և մարզերից (14)՝ **ԹԼ4.2** (10ԱՏՀ): Սույն հետազոտության շրջանակներում առանցքային տեղեկատուներն այն մասնագետներն էին, ովքեր Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո աշխատելու փորձ են ունեցել ՊՏԿ-ների հետ:

Ընտրանքի ռազմավարությունը կառուցվել է ընտրանքային սկզբունքներին և մեթոդներին համապատասխան: Այսպիսով, ՖԽ-ների թիվը սահմանվել է՝ ելնելով «հագեցվածության» մակարդակից, այսինքն՝ մինչև հետազոտական թիմը կհամարեր, որ գործնականում անիրագործելի է բացահայտել տեղեկատվությամբ հարուստ

անձանց, որոնք կարող են տրամադրել նոր տեղեկատվություն և պատկերացումներ: Հետազոտության ընտրանքի մանրամասն բաշխումը հասանելի է [Հավելված 2-ում: Ընտրանքի բաշխվածություն](#), իսկ ընտրանքային ռազմավարությունը մանրամասն նկարագրված է [Հավելված 3-ում: Սույն հետազոտության մեկնարկային հաշվետվության](#) մեջ:

ԱՏՀ-ների և ՖԻԶ-ների **անցկացման հիմնական եղանակը առցանց էր՝** անցկացված Zoom հարթակի միջոցով՝ հաշվի առնելով մասնակիցների ծախսարդյունավետությունը, ճկունության և հարմարավետության ավելի բարձր մակարդակը ու աշխարհագրական խոչընդոտները հաղթահարելու հնարավորությունը:

Ուսումնասիրությունն իրականացվել է երկու ամսվա ընթացքում՝ 2023 թվականի փետրվար-մարտ ամիսներին:

Անհրաժեշտ տվյալների հավաքագրման համար օգտագործվել է մեկ ստանդարտացված քանակական հարցաթերթ, երկու ԱՏ հարցազրույցի և երկու ՖԻԶ ուղեցույցներ ([Տես Հավելված 4: Հետազոտության գործիքներ](#)):

CATI-ի հարցազրույցները, ԱՏՀ-ները և ՖԻԶ-ները իրականացվել են՝ ապահովելով **լիակատար գաղտնիություն և հարգանք** մասնակիցների անանունությունը պահելու համար՝ համաձայն Հայաստանում գործող օրենսդրության պահանջների: Հետազոտական թիմը հիմնվել է տվյալների հավաքագրման պրոտոկոլների և ընթացակարգերի վրա՝ ապահովելու հավաքագրված տվյալների պաշտպանությունը:

Տվյալների մշակումը ԹԼ1-ի համար կատարվել է SPSS վիճակագրական փաթեթի միջոցով՝ օգտագործելով հիմնարար և առաջադեմ վիճակագրական մեթոդներ, ներառյալ պարզ նկարագրական վերլուծություն, խաչաձև աղյուսակներ և այլն:

Քանակական տվյալների թեմատիկ վերլուծությունն իրականացվել է սույն հաշվետվության [“Տեղեկատվության առաջնային կարիքներ” գլխում](#) ներկայացված տեղեկատվական կարիքների կատեգորիաներին համապատասխան:


5. Հետազոտության առանցքային բացահայտումներ

5.1 Մասնակիցներ

Քանակական հետազոտության համար տեղահանված կանայք իդենտիֆիկացվել են ՏԻՄ ներկայացուցիչների կամ ծառայություններ մատուցողների կողմից: Տարբեր սոցիալական խմբերի միջև համեմատության հնարավորությունների նպատակով հետազոտական թիմը տեղեկատվություն է հավաքագրել Հայաստանի մի շարք մարզերում՝ ներառյալ գյուղական և քաղաքային բնակավայրերում բնակվող ՊՏԿ-ներից: Ստորև ներկայացված է հետազոտության քանակական ընտրանքի բաշխումն ըստ հարցվողների սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների:

Պատկեր 1. Հարցվողների բնակավայրը:


Հարցվողների բնակավայրը



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Պատկեր 2. Հարցվողների մարզը:


Հարցվողների մարզը



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Պատկեր 3. Հարցվողների տարիքային բաշխվածությունը:


Հարցվողների տարիքային բաշխվածությունը



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Պատկեր 4. Հարցվողների ամուսնական կարգավիճակը:


Հարցվողների ամուսնական կարգավիճակը



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Պատկեր 5. Հարցվողների կրթությունը.

Հարցվողների կրթությունը



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Հարցվածների միայն ¼-ն է (24%) զբաղված, իսկ 68%-ը՝ գործազուրկ են կամ տնային տնտեսուհի: Մնացած 8%-ը թոշակառու է կամ ուսանող:


Պատկեր 6. Հարցվողների զբաղվածությունը:

Հարցվողների զբաղվածությունը

Լրիվ դրույքով աշխատող	12
Մասնակի աշխատող - կես դրույքով	9
Ինքնազբաղված/ Անհատ ձեռնարկատեր	3
Տնային տնտեսուհի	30
Գործազուրկ	38
Թոշակառու	7
Ուսանող	1

Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով


Պատկեր 7. Հարցվողների սոցիալ-տնտեսական կարգավիճակը:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Ի լրումն ժողովրդագրական տվյալների, տեղահանված կանանցից հավաքագրվել են նաև տեղահանման հետ կապված որոշ մանրամասներ. մասնավորապես՝ տեղահանման ժամանակահատվածը, տեղահանումից հետո ընդունած համայնքը փոխելու հանգամանքը, ընդունող համայնքի ընտրության հիմքում ընկած դրդապատճառները, ինչպես նաև պատերազմի հետևանքները: Ստորև ներկայացված է նշված հարցերի համառոտ տեղեկատվությունը:

Պատկեր 8. Պատերազմի ազդեցություն ՊՏԿ-ների վրա:




Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Ինչպես երևում է, հարցված կանանց գրեթե կեսը, տեղահանվելուց բացի, պատերազմի հետևանքով ձեռք է բերել ընտանիքի հաշմանդամ անդամ/բարեկամ կամ կորցրել ընտանիքի անդամին/բարեկամին:

Պատկեր 8. Տեղահանման ժամանակահատվածը.

S6. Ե՞րբ եք տեղափոխվել այս բնակավայր:




Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Ինչպես ցույց է տալիս Պատկեր 8-ը, կանանց ճնշող մեծամասնությունը (63%) տեղահանվել է պատերազմի ժամանակ, մինչդեռ 20%-ը տեղահանվել է պատերազմից անմիջապես հետո և 17%-ը՝ պատերազմից որոշ ժամանակ անց:

Տեղահանված կանանց 59%-ը հայտնում է տեղահանումից հետո իրենց առաջին վերաբնակեցման վայրի փոփոխության մասին:

Պատկեր 9. Վերաբնակեցման վայրի ընտրության պատճառները.

S8. Ինչու՞ ընտրեցիք այս համայնքը:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Տեղահանված կանանց ուղիղ կեսը (51%) նշում է, որ հյուրընկալած համայնքում ունի ընտանիքի անդամ, բարեկամ կամ ընկեր, որը դարձել է համայնքի ընտրության հիմքը: «Այլ» տարբերակում թվարկվել են այնպիսի պատճառներ, ինչպիսիք են աշխատանքի և կրթության հասանելիությունը, հյուրընկալող համայնքներում բնակարանների վարձակալության մատչելի գները: 4 դեպքում որպես հյուրընկալող համայնքի ընտրության պատճառ նշվել է Եռաբլուր գինվորական հուշահամալիրի մոտ լինելը:

ՃԻՔ ժամանակ տեղահանված կանայք նաև ընդգծում են, որ հյուրընկալող համայնքներում ընկերներ և ծանոթներ ունեն, ավելին, մեծամասնությունը բնակություն է հաստատել այն համայնքներում, որտեղից գալիս են իրենց արմատները: Հազվագյուտ դեպքերում համայնքի ընտրությունը պայմանավորված է Արցախից շատ հեռու ջիհնելու ցանկությամբ: Որպես կանոն, տեղահանված կանանց այս խումբն ընտրել է Սյունիքի մարզը: Հետագայում ոմանք տեղափոխվել են այլ համայնքներ՝ աշխատանքի, կրթության կամ բնակության հնարավորությունների պատճառով:


Կապանը ամենամոտն էր, մենք չէինք ուզում հեռու գնալ, որտեղից մոտ լինել, որպեսզի չկարոտենք Կովսականը: (25-45 տարեկան, ամուսնացած, ՊՏԿ, մարզեր)

5.2 Կարիքների համապատասխանություն

Քանակական հարցման բոլոր մասնակիցներին հարցվել են տեղահանվելուց հետո ՊՏԿ-ների առաջնային կարիքների վերաբերյալ իրագեկվածության մասին, թե իրականում ինչ կարիքներ են ունեցել, որ կարիքներ են եղել բավարարված կամ ոչ, ում են դիմել օգնության համար և այլն: Ավելին, նշված հարցերը գնահատվել են երկու մակարդակով: Հյուրընկալած համայնք տեղափոխվելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում (այսուհետ մեկ շաբաթվա ընթացքում) և նոր համայնք տեղափոխվելուց որոշ ժամանակ անց (այսուհետ տեղափոխվելուց որոշ ժամանակ):

Ինչպես ցույց են տալիս Պատկեր 10-ի արդյունքները, տեղահանված կանանց աջակցող ծառայությունների մասին իրագեկվածությունը համահունչ է ստացած ծառայություններին: Նկատելի է նաև, որ **հարցվածների գրեթե կեսը (43%) տեղահանման առաջին շաբաթվա ընթացքում որևէ աջակցություն չի ստացել:**

Պատկեր 10. Տեղահանված կանանց աջակցության ծառայությունների իրագեկում և ստացում:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Հետաքրքիր է, որ կացարանը (ինչպես կարող ենք տեսնել ավելի ուշ գեկույցում) տեղահանումից հետո առաջնային կարիքներից մեկն է, սակայն քանակական հետազոտության մասնակիցները դա շատ չեն նշել ինչպես իրագեկման, այնպես էլ աջակցություն ստանալու առումով: Այս երևույթը կարելի է բացատրել հետազոտության այն բացահայտմամբ, որ տեղահանված կանանց մեծամասնությունը սկզբնական շրջանում բնակություն է հաստատել հարազատների և ընկերների տներում: Բնակարանային խնդիրներն առաջանում են տեղահանումից որոշ ժամանակ անց, երբ պարզ է դառնում, որ համատեղ ապրելը ոչ թե ժամանակավոր է, այլ մշտական: Հարկ է ամեն դեպքում նշել, որ նոր բնակավայրում հարազատ չունեցող տեղահանված կանայք ի սկզբանե բախվում են կացարանների վարձակալության և վճարման խնդրին ու ունենում են աջակցության կարիք:

Առաջինը կացարանի խնդիրն էր, բայց քանի որ բարեկամ ունեիմք, մեզ համար հեշտ էր լուծել այդ հարցը՝ ի տարբերություն նրանց, ովքեր բարեկամ չունեն: (25-45 տ., չամուսնացած, ՊՏԿ, մարզեր)


Երբ մենք նայում ենք Պատկեր 11-ի ռիսկերի ցանկը, որոնց առհասարակ կարող են բախվել ՊՏԿ-ները և, որ հետազոտությանը մասնակցած կանայք բախվել են տեղահանումից հետո, մենք տեսնում ենք, որ **տեղահանվելուց հետո ՊՏԿ-ների**

ամենաշատ 3 ռիսկերն են՝ կացարանի բացակայությունը, ֆինանսական միջոցների բացակայությունը և գործազրկությունը:

Հետաքրքիր է, որ ապրուստի ոչ բավարար պայմանները թվարկված ռիսկերի շարքում 9-րդ տեղում են, սակայն ՊՏԿ-ներն անձամբ բախվել այս խնդրին բախվել են առավել հաճախ (4-րդ շարք՝ անձամբ առնչվող ռիսկերի մեջ):

Պատկեր 11. Ռիսկերը, որոնց ՊՏԿ-ները բախվում են տեղահանումից հետո:

Q9. Բնչ եք կարծում, որո՞նք են տեղահանվելուց հետո պատերազմից առժամ կանանց ամենահաճախ հանդիպող 3 ռիսկերը:
 Q10. Եյս ռիսկերից որի՞ն/ որո՞նց եք անձամբ բախվել տեղահանվելուց հետո:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Անձնական սոցիալ-հոգեբանական խնդիրները չեն մտնում նշված ռիսկերի առաջին եռյակում, որոնց կարող է հանդիպել WAW-ն, և հարցվածների միայն 52%-ն է անձամբ զգացել դա, ինչը նրանց հանդիպած ռիսկերի լավագույն հնգյակում է:

Հարկ է նշել, որ երեխաների կրթության և անվտանգ խաղային միջավայրի հետ առնչվող ռիսկերը շատ քիչ են շեշտադրվում:

Ինչպես ցույց են տալիս Պատկեր 11-ի տվյալները, ՊՏԿ-ները կարող են բռնության վտանգի տակ լինել: Հաշվի առնելով, որ այդ ռիսկերը կարող են անբավարար գեկուցվել, իրականության մեջ այս ցուցանիշի փաստացի պատկերը կարող է մի փոքր ավելի բարձր լինել: Թեև որակական, հետազոտության բոլոր մասնակիցները նույնպես չեն հայտնում տեղահանված կանանց նկատմամբ բռնության մասին:

*Անկեղծ ասած, փոքր համայնք է: Իմ պրակտիկայում բռնության դեպքերի չեմ հանդիպել: Չեմ էլ կարծում, որ դա տեղի կունենա: Տեղահանված կանայք մշտապես հարգված են համայնքի ղեկավարի և բնակիչների կողմից: **Սոցիալական աշխատող, Սյունիքի մարզ.***

Հետազոտության որակական բաղադրիչից (թե՛ ՖԻՔ-ների, թե՛ ԱՏՀ-ների) ստացված արդյունքների ամփոփումը ընդգծում են հետևյալ երեք հիմնական կարիքները, որոնք տեղահանված կանայք զգում են տեղահանումից հետո մեկ շաբաթվա ընթացքում.

✓ **Անվտանգության հետ կապված անմիջական վախեր,** ինչպիսիք են կացարանների

հասանելիության բացակայությունը: Այս ռիսկը հատկապես սուր են զգում անչափահաս երեխաներ ունեցող կանայք: Որպես կանոն, տեղահանված կանայք եղել են առանց ամուսինների, և բոլոր խնդիրների լուծումը դրված է եղել նրանց ուսերին: Ուստի անչափահաս երեխաների հետ բնակարանային խնդիրների լուծումը նրանց համար կրկնակի դժվարացել է: ԱՏՀ-ների ժամանակ որոշ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ նշեցին, որ իրենք որոշակի դժվարություններ են ունեցել տեղահանվածներին կացարան տրամադրելու հարցում՝ բավարար կենսապայմաններով համապատասխան քաղաքային շենքերի բացակայության պատճառով: Ուստի խնդիրը լուծվել է համայնքի բնակիչների և հյուրանոցների սեփականատերերի (առկայության դեպքում) բարի կամքի շնորհիվ: Այն տեղահանված կանայք, ովքեր չեն ունեցել հարազատներ, ընկերներ, ժամանակավորապես տեղավորվել են համայնքում գտնվող հյուրանոցներում և հյուրատներում կամ չբնակեցված տներում, որոնց սեփականատերերը գտնվում են արտերկրում:

Ինքս ունենալով մեկ այլ բնակարան՝ տվել եմ տեղահանված կանանց, և նրանք այնտեղ ապրել են 4-5 ամիս: (Քաղաքապետարանի ներկայացուցիչ, Երևան)

✓ **Առաջին անհրաժեշտության պարագաների բացակայություն,** ինչպիսիք են սնունդը, հիգիենայի պարագաները, հագուստը: Տեղահանված կանայք ՖԻՔ-ների ժամանակ նշում էին, որ իրենց բնակավայրերը լքելիս չէին պատկերացնում, որ կարող էին չվերադառնալ, ուստի իրենց հետ բավարար հագուստ չէին վերցրել: Բացի այդ, կլիմայական պայմանների տարբերության պատճառով որոշ դեպքերում իրենց բերած հագուստը չի համապատասխանել հյուրընկալող համայնքի բնակլիմայական պայմաններին:

✓ **Երեխաների հետ կապված սոցիալ-հոգեբանական**

խնդիրներ: Ի տարբերություն կանանց, երեխաները սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք ունեն տեղահանման առաջին իսկ օրերից, ինչպես վկայում են հետազոտության մասնակիցները: Առաջ են քաշվում համայնքի միջավայրին, նոր կացարանին կամ ուսումնական հաստատությունների միջավայրին չհարմարվելու խնդիրները: Նշվում է մինչև 2 տարի տևող ադապտացիոն դժվարությունների մասին:

Երեխաները չէին հարմարվում դպրոցներին. 3 դպրոց փոխեցինք, մինչևե հարմարվեցին, իրենց դպրոցն էին ուզում: (25-45 տարեկան, ամուսնացած, ՊՏԿ, մարզեր)
Երեխաների համար դժվար էր. Նրանք կարոտում էին գյուղը, կարոտում էին իրենց խաղալիքները, հրաժարվում էին ուսուցում: (25-45տ., ամուսնացած, ՊՏԿ, Երևան)

Հավակցուտ դեպքերում սոցիալական աշխատողները և ՏԻՄ ներկայացուցիչները կարևորում են **դեղորայքի և բժշկական օգնության անհրաժեշտությունը**, հատկապես քրոնիկական հիվանդությունների ունեցողների համար, ովքեր

կանոնավոր կերպով կարիք ունեն ստանալու բժշկական օգնության (օրինակ՝ դիաբետիկների) կամ բուժման (օրինակ՝ դիալիզի ստացողներին) հանրային աջակցության ծրագրերի միջոցով:

Կարիքները, որոնք առաջանում են **տեղահանումից որոշ ժամանակ անց**, հիմնականում կապված են.

- ✓ **Բավարար կենցաղային պայմաններով կացարան գտնելու/գնելու կարիք:** Տեղափոխվելուց հետո որոշ ժամանակ անց կանայք ստիպված են լինում ազատել իրենց ժամանակավոր տրամադրված կացարանները և վարձել կամ գնել նորը, եթե ֆինանսական միջոցներ ունեն կամ կառավարությունից ֆինանսական աջակցություն են ստացել բնակարաններ գնելու համար:
- ✓ **Ապրուստի միջոցների հայթհայթման կարիք:** Տեղահանված կանայք ունենում են ապրուստի միջոցների կորուստ՝ ներառյալ մարդկանց աշխատելու և եկամուտ ստանալու անկարողությունը: Տեղահանված կանայք հիմնականում եկել էին իրենց երեխաների հետ և ամուսինները չեն ուղեկցել իրենց, ուստի եկամուտ ստանալու հնարավորությունները սահմանափակ էին՝ պայմանավորված երեխաների խնամքի հետ կապված հոգսերով:
- ✓ **Կրթության հնարավորությունների կարիք՝** տեղական աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան մասնագիտություններ և հմտություններ ձեռք բերելու համար: Կանայք բախվում են աշխատանքի (եթե լինում է), երեխաներին խնամելու և կրթություն ստանալու միջև ընտրության խնդրին: Գյուղական համայնքներում բնակություն հաստատած տեղահանված կանայք նույնպես պետք է գնան հարևան համայնքներ՝ ֆորմալ կրթություն ստանալու: Այս տեսանկյունից միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների կողմից համայնքներում կազմակերպված դասընթացները (մատնահարդարի, վարսահարդարի, խոհարարի և այլնի համար) բավականին հեշտացրել են կանանց աշխատանքը: Մակայն, ըստ սոցիալական աշխատողների, հաճախ կանայք հրաժարվում են դասընթացներին մասնակցել այլ աշխատանք ունենալու կամ իրենց երեխաներին խնամելու համար փոխարինող անձ չունենալու պատճառով:

✓ **ՊՏԿ-ների սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք.**

Պատերազմի հոգեբանական ազդեցությունը և մշտական վախը մեծ վնաս են հասցնում տեղահանված կանանց: Թեև տեղահանված կանայք պատերազմի առաջին իսկ օրերից ունեն սոցիալ-հոգեբանական խնդիրներ և վախեր, սակայն տեղահանումից որոշ ժամանակ անց են միայն նրանք կարողանում կենտրոնանալ այդ խնդիրների վրա, երբ առաջնային տարրական կարիքները (կացարան, սնունդ, հագուստ) որոշակիորեն բավարարված են: Սոցիալ-հոգեբանական աջակցության կարիքը հետազոտության մասնակից ՊՏԿ-ները իրապես նկատել են հատկապես, երբ պարզ է դարձել, որ նրանք կորցրել են իրենց տները/բնակավայրերը և հետդարձի ճանապարհ չունեն: Այնուամենայնիվ, շատ հազվադեպ դեպքերում, հետազոտության մասնակիցների կողմից նշվում է, որ նրանք դիմել են սոցիալ-հոգեբանական աջակցության համար կամ ընդունել են սոցիալական աշխատողների առաջարկը՝ մասնակցելու սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրերին:

Հետազոտությանը մասնակցած ՏԻՄ ներկայացուցիչների, ՍԱ-ների և ՊՉԿ-ների կարծիքով, իրենց որդիներին կորցրած և ամուսիններին կորցրած ու անչափահաս երեխաներ ունեցող մայրերը ամենադժվարն են հաղթահարել սոցիալ-հոգեբանական խնդիրները: Սակայն, եթե անչափահաս երեխաներ ունեցող այրի կանայք ստիպված են աշխատել երեխաներին խնամելու համար, ապա իրենց որդիներին կորցրած կանանց մոտ աշխատելու ստիմուլը բացակայում է: Սոցիալական աշխատողները նշում են նաև, որ որդեկորույս մայրերի մեծամասնության հետ կարողացել են կոնտակտ հաստատել պատերազմից միայն 1-1,5 տարի անց, իսկ մի մասի հետ էլ չի հաջողվել ցայսօր:

Ինչպես ցույց են տալիս քանակական հետազոտության արդյունքները, տեղահանվելուց անմիջապես հետո ստացված աջակցության մեջ **հարցվողները առաջնահերթություն են տալիս սննդին (66%), որին հաջորդում է ֆինանսական**

Ընդհանուր առմամբ, կանայք և տղջիկները հոգեբանական խորհրդատվության չէին դիմում: Նրանց ավելի շատ աշխատանք և կրթություն էր պետք: (ՍԱ, Երևան)

Երբ կանանց հոգեբանական աջակցություն էին առաջարկում, նրանք հիմնականում հրաժարվում էին, ավելի շատ նյութական աջակցություն էին ուզում, որ կարողանան ապրել: Իսկ այն կանայք, ովքեր կորցրել էին ընտանիքի անդամին, ասում էին. «Իմ կորստից հետո ինձ այլևս չեք օգնի»: Կարծում եմ՝ դա հայկական մտածելակերպի խնդիր է, մենք սովոր ենք ինքնուրույն հաղթահարել խնդիրները: (ՍԱ, Գեղարքունիք)

Նրանք սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք չունեին: Մենք սկզբում գնացինք նրանց տուն, բայց նրանց պետք չէր: Նրանք ուղղակի ցնցված էին, որ լքել էին իրենց տները: (ՏԻՄ ներկայացուցիչ, Գեղարքունիք)

Բոլորս էլ հոգեբանական աջակցության կարիք ունեինք, բայց առաջարկ չկար, աջակցության համար էլ չդիմեցինք: Մենք ինքնուրույն անցանք դրա միջով: Մենք 44 օր մեծ լարվածության մեջ էինք: Ես ոչ մեկի հետ չեմ շփվել: Մարդիկ ինձ հարցնում էին, թե եղբայրս զանգե՞լ է ինձ, ես ընկճվում էի: Բայց հետո աջակցություն չկար ոչ ծնողների, ոչ էլ մյուսների համար: (20-45 տ., չամուսնացած, ՊՏԿ մարզեր)

աջակցությունը (13%): Այնուհետև նրանք կարևորում են կացարանը (9%), ապա ոչ պարենային ապրանքները՝ հիգիենիկ փաթեթ, հագուստ և այլն (6%):

Տեղահանումից որոշ ժամանակ անց աջակցության երկու ամենակարևոր ձևերը կրկին մնում են սնունդը (37%) և ֆինանսական աջակցությունը (33%): Ինչպես երևում է, այս շրջանում կանայք կրկնակի մեծ նշանակություն են տալիս ֆինանսական աջակցությանը, քան տեղահանումից հետո առաջին շաբաթվա ընթացքում: Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նշված երկու ժամանակահատվածում կանայք գրեթե չեն նշում սոցիալական աշխատողի և սոցիալ-հոգեբանական աջակցության անհրաժեշտությունը: Այսպիսով, սոցիալական աշխատողի և/կամ սոցիալ-հոգեբանական աջակցության կարևորությունը հարցվածների կողմից ընդգծվում են յուրաքանչյուրը 1%-ով:

Հետազոտության քանակական տվյալները ցույց են տալիս, որ տեղահանված կանանց համար **բնակարանային (23%) և ֆինանսական (28%) խնդիրները մնում են չլուծված:** Իսկ ՖԻՔ-ների ժամանակ կանայք նշում են, որ այսօր բնակարանների վարձակալության գները բավական բարձր են, որպեսզի կարողանան համապատասխան բնակարան գտնել և/կամ շուկայում առաջարկվող աշխատատեղերի դիմաց վճարվող աշխատավարձով ծածկել բնակարանային ու կեցության ծախսերը: Ոմանք ապրում են նեղ բնակարաններում կամ սենյակներում՝ առանց նվազագույն կենսապայմանների և իրենց շահագործված են զգում իրենց տանտերերի կողմից, ովքեր բարձր վարձավճարներ են գանձում կամ հաճախ սպառնում են վտարել նրանց:


Աշխատանքի հետ կապված շատ դժվարություններ կան. Այժմ աշխատանքին նայում ենք ոչ թե որպես հաճելի գրադուներ, այլ կենտրոնանում ենք ֆինանսական կողմի վրա, որպեսզի կարողանանք տան վարձը վճարել և կենցաղային այլ հարցեր կազմակերպել: Մի բան է աշխատել հաճույքի համար, մեկ այլ բան՝ աշխատել ֆինանսական ակնկալիքների համար: (25-45տ., ամուսնացած, ՊՏԿ, Երևան):

Մենք գրեթե մեր ամբողջ վաստակածը տալիս ենք տան վարձավճար: Տան վարձը թույլ չի տալիս այլ նյութական հարցեր լուծել: Կոմունալները նույնպես շատ թանկ են, վախենում ենք օգտվել գազից կամ լույսից: Բայց փոքր երեխաներին էլ չենք կարող ցրտին պահել: Ուստի այս ծախսերը հասնելուց հետո սննդի համար քիչ գումար է մնում: (25-45 տարեկան, ամուսնացած, ՊՏԿ, մարզեր):

Ինչպես ցույց են տալիս Պատկեր 12-ի տվյալները, հարցվածների մեկ երրորդը գոհ է մնացել այն աջակցություններից, որոնք ստացել է տեղափոխվելուց հետո առաջին շաբաթվա ընթացքում: Կարևոր աջակցության ձևերը, որ ստացել են ՊՏԿ-ները՝ սնունդն է, ֆինանսական աջակցությունը և կացարանը Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ տրամադրված աջակցությունը եղել է համապատասխան ՊՏԿ-ների կարիքներին, քանի որ ամենաշատը տրամադրվել են ՊՏԿ-ների համար 5 ամենակարևոր աջակցության ձևերը:

Պատկեր 12. Ստացված աջակցության համապատասխանությունը տեղափոխվելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում:


Q2. Ի՞նչ աջակցություն եք ստացել:
 Q3. Ո՞րն էր ամենակարգիորը ստացած աջակցություններից:
 Q4. Ո՞ր հրատապ կարիքներն են մնացել չբավարարված:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Ինչ վերաբերում է տեղահանումից որոշ ժամանակ հետո ընկած ժամանակահատվածին, ապա նկատելի է, որ կացարանային աջակցությունը դեռևս ամենամեծ չբավարարված կարիքն է: Սակայն առաջին երկու աջակցությունները, որոնք տրամադրվել են, վերաբերում էին ՊՏԿ-ների համար երկու ամենակարևոր աջակցություններին (սնունդ և ֆինանսական աջակցություն) (Պատկեր 13):

Պատկեր 13. Ստացված աջակցության համապատասխանությունը տեղափոխվելուց հետո որոշ ժամանակ անց:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Հաղորդակցման, տեղեկատվության և սոցիալական ծառայությունների բացակայությունը, ներառյալ իրավաբանական օգնության բացակայությունը, երեխաների խնամքի ծառայությունների բացերը և ՊՏԿ-ների համար անհրաժեշտ սոցիալական ծառայությունների հասանելիությունը գրեթե չեն նշվել հետազոտության թիրախային խմբերի կողմից: Հետազոտության որակական մասի արդյունքները ցույց են տալիս, որ աջակցության ծրագրերի կազմակերպումն ու իրականացումը բավականին համակարգված են եղել

դերակատարների հստակ բաշխման և առկա ծրագրերի մասին շահառու խմբերին տեղեկատվության տրամադրման տեսանկյունից: Առաջին շաբաթներին հաստատություններում որոշակի խառնաշփոթ եղել է, սակայն շատ արագ կառավարությունն արձագանքել է իրավիճակին՝ մշակելով տեղահանվածների հաշվառման հստակ մեխանիզմներ և օգնություն տրամադրելու ծրագիր:

Այսպես, պատերազմի առաջին օրերին տեղահանվածների հաշվառումն իրականացվում էր առանց պաշտոնական ձևաթղթերի, սակայն 7-10 օրվա ընթացքում բոլոր տեղական ինքնակառավարման մարմինները կառավարությունից ստացել են տեղահանվածների հաշվառման թերթիկներ՝ հստակ չափորոշիչներով:

Քաղաքապետարանից զանգահարեցին և հրավիրեցին գրանցվել աջակցության ծրագրերից օգտվելու համար: Գործում էր նաև կազմակերպություն, որը տրամադրում էր սննդամթերք և հիգիենայի պարագաներ և քաղաքապետարանը մեզ կրկին հրավիրեց դրանք ստանալու: (25-45 տարեկան ամուսնացած, ՊՏԿ, մարզեր):

Զևաթղթերի լրացումը հիմնականում պատվիրակվել է համայնքային սոցիալական աշխատողներին: Վերջիններս տնային այցերի միջոցով լրացրել են այդ ձևաթղթերը, ապա տրամադրել միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններին (ՄՍԾՏԿ): Գյուղական բնակավայրերում գրանցման գործընթացն իրականացվել է գրեթե 100%-ով՝ պայմանավորված տեղահանվածների փոքր հոսքով և համայնքներում տեղեկատվության շատ արագ տարածման մեխանիզմների առկայությամբ:

Քաղաքային բնակավայրերում, հատկապես Երևանում, տնային այցելությունների կազմակերպումը որոշ չափով դժվար է եղել: Այստեղ գրանցումը հաճախ կատարվել է հեռախոսագանգերի միջոցով, կամ եթե տեղահանվածներն անձամբ են այցելել ՄՍԾՏԿ: Պատահել է, որ տեղահանվածներին տեղափոխող մարդիկ են հայտնել տեղահանվածների մասին՝ տրամադրելով վերջիններիս կոնտակտները կամ գտնվելու վայրը:

Այն անձինք, ովքեր կազմակերպել էին Արցախից տեղահանված ընտանիքների տեղափոխումը, նրանց տեղավորում էին հանրակացարաններում, հյուրանոցներում, առանձնատներում, հետո հենց իրենք էին մեզ հայտնում այդ ընտանիքների հասցեները: Տեղեկությունները ստացվել են շատ տարբեր աղբյուրներից: Երբ այս ընտանիքները եկան, հաստատվեցին, բոլորը գիտեին, թե ուր և ում դիմեն: (ՏԻՄ ներկայացուցիչ, Երևան)


Մեր դեպքում մենք գրանցվել ենք քաղաքապետարանում, բայց մեզ չեն այցելել: (20-45տ., չամուսնացած, ՊՏԿ, Երևան)

Երևույթը պայմանավորված է նրանով, որ Երևանում տեղահանված ընտանիքների թիվը բավականին մեծ է եղել, համապատասխանաբար մեծ է եղել նաև սոցիալական աշխատողների և ՏԻՄ ներկայացուցիչների ծանրաբեռնվածությունը: Վերջիններս միայն կարողացել են լուծել իրենց դիմած տեղահանվածների՝ այդ պահի հրատապ խնդիրները:

Քանակական հետազոտության արդյունքները ցույց են տալիս (Պատկեր 14), որ տեղահանված կանանց գրեթե կեսը (49%) համաձայն չէ, որ պետական կառույցները հետաքրքրություն են ցուցաբերել ՊՏԿ-ների կարիքների նկատմամբ և իրենց կամքով նախաձեռնել աջակցման ծառայություններ: Ավելին, նրանց մեծ մասը (64%) Երևանից են:

Պատկեր 14. ՊՏԿ-ներով հետաքրքրված կառույցները:


Q8. Որքանով եք համաձայն կամ ոչ հետևյալ պնդումների հետ:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Մյուս կողմից, միայն 35%-ն է սեփական նախաձեռնությամբ դիմել որևէ կազմակերպության աջակցության համար: Տեղահանված կանայք հիմնականում դիմել են ՏԻՄ ներկայացուցիչներին կամ ՍԱ-ներին (43%), որին հաջորդում են միջազգային կազմակերպությունները (32%) և ՀԿ-ները (29%): Միևնույն ժամանակ, Երևանում ՊՏԿ-ներն ավելի շատ դիմել են միջազգային կազմակերպություններին (46%), իսկ մարզային քաղաքներում՝ ՏԻՄ-երին (63%): Գյուղական համայնքներում այս երկու կառույցներին ՊՏԿ-ները դիմել են հավասարապես (35%): Սա ամրապնդում է որակական ուսումնասիրության այն բացահայտումը, որ գյուղերում ՏԻՄ-երը և ՍԱ-ները կապ են հաստատել նաև տեղահանված ընտանիքների հետ և տեղեկացրել առկա աջակցության ծրագրերի մասին:

Պատկեր 15. Այն հաստատությունները, որոնց աջակցության համար դիմել է ՊՏԿ-ները:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

ԱՏՀ-ների ժամանակ ՏԻՄ ներկայացուցիչներն ու ՍԱ-ները նշում են, որ տեղահանված կանանց շրջանում տեղեկատվության տարածումը շատ արագ է եղել բանավոր հաղորդակցության միջոցով, և հաճախ նրանք քաղաքապետարան են եկել՝ արդեն իմանալով առկա օժանդակ ծառայությունների մասին: Միևնույն ժամանակ տեղեկատվության տարածումը տեղի է ունեցել ոչ միայն համայնքի ներսում, այլև միջհամայնքային և միջմարզային մակարդակներում: Այսպիսով, տարբեր համայնքներում կամ նույնիսկ տարբեր մարզերում ապրող ՊՏԿ-ներին նույնպես տեղեկատվություն են տրամադրել իրենց համայնքներում առկա օժանդակ

Մեր ծանոթներն ասացին՝ զնացեք գրանցվեք, աջակցություն է ցուցաբերվում սննդի, հիգիենայի պարագաների տեսքով: Այդպես տեղեկացանք, զնացինք, ստացանք: (25-45տ., ամուսնացած, ՊՏԿ Երևան):

ծառայությունների մասին: Տեղեկությունը ստանալուց հետո մյուս կանայք փորձել են նույն աշակցությունը ստանալ իրենց համայնքներից:

ՏԻՄ-երը, միջազգային կազմակերպությունները, ՀԿ-ները և համայնքի բնակիչները նշված են որպես աշակցության հիմնական մատակարարներ՝ ըստ հետազոտության մեջ ընդգրկված բոլոր խմբերի. Աղյուսակ 2-ում ներկայացված են աշակցություն տրամադրողների տեսակարար կշիռն ըստ աշակցության տեսակի՝ տեղահանվելուց հետո առաջին շաբաթվա ընթացքում:

Աղյուսակ 2. Աշակցություն տրամադրողները տեղահանումից հետո առաջին շաբաթվա ընթացքում:

Առաջին շաբաթվա ընթացքում	Մնու նդ	Հիգիենիկ փաթեթ	Բժշկական աշակցություն	ՍԱ ծառայություններ	Սոցիալ-հոգեբանական աշակցություն	Կացարանի տրամադրում	Հագուստ, կենցաղային տեխնիկա	Կրթական աշակցություն	Եկամտի աղբյուր	Ֆինանսական աշակցություն
<i>Հիմք</i>	<i>255</i>	<i>120</i>	<i>19*</i>	<i>47</i>	<i>37</i>	<i>61</i>	<i>77</i>	<i>23*</i>	<i>25*</i>	<i>74</i>
ՏԻՄ/Համայնքային սոցիալական աշխատող	71%	60%	42%	51%	57%	48%	40%	65%	60%	49%
ՀԿ-ներ	25%	25%	11%	3%	15%	3%	27%	13%	8%	15%
Միջազգային կազմակերպություններ	19%	18%	11%	14%	6%	0%	21%	13%	0%	5%
Համայնքում բնակվող հարազատներ	10%	13%	5%	14%	15%	31%	10%	13%	12%	7%
Հյուրընկալող համայնքի բնակիչներ	13%	15%	0%	3%	11%	15%	17%	17%	8%	4%
ԱՍՀԼՆ/ ՄՍԾՏԿ	7%	14%	0%	5%	15%	8%	10%	4%	8%	9%
Այլ տեղահանված ՊՏԿ-ները	1%	2%	16%	0%	2%	0%	1%	0%	8%	0%
Դժվարանում են պատասխանել	4%	8%	16%	3%	4%	5%	5%	0%	0%	3%

*=Հիմքը վիճակագրորեն ոչ հավաստի է.

Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, որ դեպքերի մեծ մասում **տեղահանման առաջին շաբաթվա ընթացքում աշակցություն ցուցաբերողները եղել են ՏԻՄ-երը/համայնքի ՍԱ-երը, որոնց հաջորդում են տեղական և միջազգային կազմակերպությունները:** Համայնքում բնակվող հարազատները 31%-ով օգնել են կացարան գտնելու հարցում, իսկ համայնքի մյուս բնակիչները՝ կրկնակի պակաս (15%):

Պատկերը մի փոքր այլ է, երբ այն նայում ենք տեղաշարժից որոշ ժամանակ անց: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 3-ում, ՏԻՄ-երի դերը մնում է գերիշխող սննդի, հիգիենայի պարագաների և հագուստի տրամադրման հարցում: Մինչդեռ, օրինակ, սոցիալական աշխատողի կամ սոցիալ-հոգեբանական ծառայությունների

մատուցումը հետին պլան է մղվում, և այդ գործառույթը ստանձնում են տեղական և միջազգային կազմակերպությունները: Այս փուլում ընդգծվում է նաև ԱՍՀԼՆ-ի/ՄՄԾՏԿ-ների աջակցությունը հատկապես ֆինանսական աջակցության, կացարանի (տրամադրվել են բնակարան ձեռք բերելու վկայականներ) և սոցիալական ծառայությունների տրամադրման հարցում:


Սեղան 3. Աջակցություն տրամադրողները տեղահանումից որոշ ժամանակ անց:

Տեղահանումից որոշ ժամանակ անց	Սնունդ	Հիգիենիկ փաթեթ	Բժշկական աջակցություն	ՍԱ ծառայություններ	Սոցիալ-հոգեբանական աջակցություն	Կացարանի տրամադրում	Հագուստ, կենցաղային տեխնիկա	Կրթական աջակցություն	Եկամտի աղբյուր	Ֆինանսական աջակցություն
Հիմք	312	217	84	56	41	53	189	100	64	220
ՏԻՄ/Համայնքային սոցիալական աշխատող	62%	42%	33%	29%	22%	36%	38%	21%	27%	22%
ՀԿ-ներ	40%	47%	29%	34%	44%	23%	43%	34%	45%	19%
Միջազգային կազմակերպություններ	31%	33%	18%	20%	29%	4%	23%	16%	23%	12%
Համայնքում բնակվող հարազատներ	13%	12%	8%	9%	5%	9%	5%	6%	0%	9%
Հյուրընկալող համայնքի բնակիչներ	14%	12%	11%	18%	0%	21%	6%	9%	0%	37%
ԱՍՀԼՆ/ ՄՄԾՏԿ	7%	6%	1%	2%	2%	17%	4%	1%	3%	5%
Այլ տեղահանված ՊՏԿ-ները	3%	5%	1%	2%	0%	0%	2%	1%	3%	3%
Այլ	1%	1%	11%	0%	0%	2%	1%	1%	0%	3%
Դժվարանում եմ պատասխանել	5%	6%	14%	23%	17%	6%	9%	14%	14%	10%

Հատկանշական է, սակայն, որ **չնայած աջակցության տրամադրման գործում ՏԻՄ-երի մեծ ներգրավվածությանը, նրանց աշխատանքից դժգոհ մարդկանց թիվն ամենաբարձրն է (Պատկեր 16):**

Պատկեր 16. Տարբեր կառույցների կողմից տրամադրված աջակցությունից բավարարվածությունը:

Չ6. Ընդհանուր առմամբ, որքանով եք բավարարված ձեզ տրամադրված աջակցությունից



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Խմբային քննարկման արդյունքների համաձայն՝ համայնքապետարանների և համայնքային սոցիալական աշխատողների հետ շփումը հիմնականում սահմանափակվել է.

✓ **Տեղահանված ընտանիքների հաշվառում.**

Սրա շրջանակներում հիմնականում հավաքագրվել է տեղեկատվություն ՊՏԿ-ների ընտանիքների սեռատարիքային կազմի, կրթության և կարիքների վերաբերյալ: Հաճախ նշվում էր, որ անձնական տվյալների և կարիքների գրանցումը միակ շփումն է եղել համայնքների հետ: Եվ դրանից հետո կարիքների բավարարմանն ուղղված այլ քայլեր չեն եղել:

Հատկապես պատերազմից հետո մեզ մոտ եկան թաղապետարանի ներկայացուցիչները: Հետաքրքրվեցին ու արձանագրեցին, թե ի՞նչ խնդիրներ ունենք, որտե՞ղ ենք ապրում: Բայց, միանշանակ, այդ տեղեկությունը մնաց թղթի վրա, քանի որ մենք հետագա գործողություն չտեսանք: Նրանք իրենց գործն արեցին, բայց ես անձամբ ոչինչ չստացա: (25-45տ., ամուսնացած, ՊՏԿ, Երևան):

✓ **Ոչ ֆինանսական աջակցության տրամադրում,** որի շրջանակներում պետական և ՀԿ/միջազգային հատվածի աջակցության ծրագրերի միջոցով հիմնականում հասկացվել են սննդամթերք, հագուստ, հիգիենայի պարագաներ:

✓ **Կրթության և աշխատանքի մատչելիության ապահովում.** Կրթության առումով ՏԻՄ-երը և ՍԱ-երը հիմնականում ՊՏԿ-ներին ուղղորդել են առկա աջակցող սոցիալական ծրագրերի շրջանակներում, որոնք հիմնականում իրականացվել են միջազգային և տեղական կազմակերպությունների միջոցով: Այստեղ հիմնականում հիշատակվում են Վորլդ Վիժն, Առաքելություն Հայաստան, Կարմիր Իսաչ, ՅՈՒՆԻՍԵՖ և այլ կազմակերպություններ:

✓ **Ուղղակի ուղղորդումներ.** ՏԻՄ ներկայացուցիչները և ՍԱ-երը ՊՏԿ-ներին ուղղորդել են անմիջապես սոցիալական ծառայություններին և ծրագրերին, որոնք աջակցություն և օգնություն են տրամադրում: Այն ներառում է կանանց ուղղորդումը տեղական առողջապահական կենտրոններ, համայնքային կազմակերպություններ կամ պետական մարմիններ, որոնք առաջարկում են այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են անվճար բժշկական օգնությունը, խորհրդատվությունը, իրավաբանական օգնությունը և այլն:

Իսկ ՏԻՄ ներկայացուցիչների և ՍԱ-ների կողմից ԱՏՀ-ների ժամանակ նշված աջակցության հիմնական ձևերն են.

- ✓ **Կարիքների գնահատումը**
- ✓ **Ուղղակի ուղղորդումները.** Ուղեգիրների տրամադրում դեպի տեղական առողջապահական կենտրոններ, համայնքային կազմակերպություններ կամ պետական մարմիններ դիմելու միջնորդության տրամադրում, որոնք առաջարկում են այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են անվճար բժշկական օգնությունը, խորհրդատվությունը, իրավաբանական օգնությունը և այլն;
- ✓ **Կրթության և աշխատանքի մատչելիության ապահովում.** Կրթության կողմնորոշում և թրեյնինգների տրամադրում գործընկեր կազմակերպությունների ծրագրերով և զբաղվածության միջնորդությամբ համայնքային տնտեսվարող սուբյեկտների միջոցով (առկայության դեպքում);
- ✓ **Ոչ ֆինանսական աջակցության տրամադրում,** որի շրջանակներում սննդամթերքը, հագուստը, հիգիենայի պարագաները հիմնականում հատկացվել են պետական և ՀԿ/միջազգային հատվածի աջակցության ծրագրերի միջոցով;
- ✓ **Հազվագյուտ դեպքերում սոցիալ-հոգեբանական աջակցություն և/կամ ուղղորդում:** Ըստ ԱՏՀ-ների, ՊՏԿ-ները հիմնականում չեն դիմում կամ բարձրաձայնում սոցիալ-հոգեբանական աջակցության մասին: Մինչդեռ զոհ կամ զինհաշմանդամ անդամ ունեցող ընտանիքների կանայք այս աջակցության կարիքն ունեն, սակայն մեծ դժվարությամբ են ընդունում օգնությունը: Ամեն դեպքում, սոցիալ-հոգեբանական աջակցությանը դիմելու նրանց նախաձեռնությունը բացակայում է, և դա հիմնականում կախված է սոցիալական աշխատողների անհատական կամքից: Չոհերի ընտանիքների սոցիալ-հոգեբանական աջակցության առավել մեծ կարիքն այն է, որ հասարակությունը հիշի իրենց զոհված անդամներին, իսկ զինհաշմանդամները՝ ավելի մեծ կարիք ունեն ինտեգրվելու առօրյա կյանքին և իրենց զգալու որպես հասարակության լիարժեք անդամ:
- ✓ **Հազվագյուտ դեպքերում «բախտակիցների» ուղղորդումներ.** Եզակի համայնքներում ՏԻՄ ներկայացուցիչները և ՍԱ-երը կազմակերպում են հանդիպումներ այլ կանանց հետ, որի շրջանակներում ՊՏԿ-ները կապ են հաստատում և աջակցություն են ստանում նմանատիպ փորձ ունեցող այլ կանանցից: Սա հիմնականում արվում է համայնքային միջոցառումների և/կամ խմբային հանդիպումների միջոցով:

Տղաներին կամ ամուսիններին կորցրած մայրերն ու կանայք տանից դուրս գալու խնդիր ունեն. Կան ընտանիքներ, որոնց մայրերը դեռ տանից դուրս չեն եկել, դեռ չեն լքել իրենց վիշտը. Փորձում ենք նույն կատեգորիայի մարդկանց, որոնց վիճակը համեմատաբար ավելի լավ է, հրավիրել խմբային հանդիպումների: Դա շատ է օգնում: (Սոցիալական աշխատող, Գեղարքունիք):

Կարելի է ասել, որ գենդերազգայուն ծրագրերը նպատակային չեն իրականացվել: ՏԻՄ-երը փորձել են ընդհանուր աջակցություն ցուցաբերել ընտանիքներին, բայց ոչ հենց կանանց՝ հիմնվելով տվյալ պահին առկա աջակցության ծրագրերի վրա: Այսպես՝

ՏԻՄ-երն առաջնորդվել են հիմնականում այդ պահին աշխատաշուկայի պահանջարկով (անկախ այն բանից՝ դա ուղղված է եղել կանանց թե տղամարդկանց) կամ ՀԿ-ների կամ միջազգային կազմակերպությունների աջակցության ծրագրերին: Հաշվի առնելով, որ տեղական աշխատաշուկայի պահանջարկը այնքան էլ մեծ չէ, հատկապես գյուղական համայնքներում և մարզային քաղաքներում, ՏԻՄ-երը սոցիալական ծառայությունների մատուցման հարցում մեծապես հիմնվել են հասարակական և միջազգային կազմակերպությունների աջակցության ծրագրերի վրա: Իսկ ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը հիմնականում եղել են զենդերազգայուն՝ ուղղված հիմնականում ՊՏԿ-ներին: Ուստի կարելի է ասել, որ իրականացված ծրագրերը հիմնականում եղել են զենդերազգայուն:

ՏԻՄ-երի և ՍԱ-երի աշխատանքից գոհունակությունը միանշանակ չէ:

Խմբային քննարկման մասնակիցներից ոմանք գոհ են տրամադրված աջակցություններից, իսկ ոմանք էլ համարում են, որ աջակցությունը չի համապատասխանում սոցիալական արդարության սկզբունքներին: Այսպիսով, որոշ մարդիկ աջակցություն են ստացել տարբեր հաստատություններից, իսկ ոմանք աջակցություն են ստացել մեկ հաստատությունից կամ ընդհանրապես չեն ստացել: Խոսքը հիմնականում գնում է նյութական աջակցությանը:

Աջակցություն է ցուցաբերվել բոլորին: Իսկ ծրագրերի մասին տեղեկացել ենք միմյանց միջոցով: Չկա այդպիսի մարդ, որ աջակցություն ստացած չլինի: Մեկը մի քիչ ավել, մյուսը՝ մի քիչ քիչ: Նույնիսկ հոգեբանական ծառայություններ էին կազմակերպում երեխաների համար, հրավիրում ֆիլմ դիտելու, տանում էին էքսկուրսիաների: Ես շատ գոհ եմ: (25-45տ., ամուսնացած, ՊՏԿ, Երևան):

Բացի այդ, դժգոհությունը մեծապես պայմանավորված է այնպիսի կարիքների ոչ բավարար աջակցություն տրամադրմամբ, ինչպիսիք են կացարանը, աշխատանքը, սոցիալ-հոգեբանական խորհրդատվությունը և այլն: Բնակարանային խնդիրը շատ տեղահանված կանանց համար առանցքային խնդիրն է: Շատերը կարծում են, որ իրենց կարիքներն ու ակնկալիքները չեն բավարարվել և հայտնում են կացարանի որակի հետ կապված իրենց մտահոգությունները, այդ թվում՝ իրենց բնակարանի չափը և կենսապայմանները: Ընտանիքները, ովքեր կուզենային տեղափոխվել նոր բնակարան, անհանգստացած են կառավարությունից ֆինանսական աջակցության չստանալու համար:

Աշխատանք գտնելու ցածր հնարավորությունները, հատկապես մարզային քաղաքներում և գյուղական համայնքներում, թույլ չի տալիս ՏԻՄ-երին և ՍԱ-երին լիարժեք աջակցել տեղահանված կանանց: Սոցիալ-հոգեբանական խորհրդատվության առումով ՊՏԿ-ները դժգոհ էին, քանի որ նրանց հիմնական խնդիրները դեռևս մնում են չլուծված:

Մասնակցել եմ հոգեբանական դասընթացների, պատմել եմ իմ խնդիրների մասին, բայց ոչինչ չեմ արել: Հոգեբանը անփորձ էր, ուստի չկարողացավ շատ բան ասել իմ խնդիրների մասին: (25-45տ., ամուսնացած, ՊՏԿ, մարզեր):

Մյուս կողմից, ԱՏՀ-ների ժամանակ ՏԻՄ ներկայացուցիչները և ՍԱ-երը կարևորել են հետևյալ խնդիրները.

✓ **Համակարգման բացակայություն.** տարբեր ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների միջև փոխհամագործակցությունը այնքան էլ ուժեղ չի եղել, և կրկնություններ են եղել ոչ միայն աջակցության ձևերի, այլև շահառուների առումով: Այսինքն՝ որոշ շահառուներ ստացել են նույն աջակցությունը տարբեր կազմակերպություններից, իսկ ոմանք ընդհանրապես չեն շահել աջակցությունից: Մյուս կողմից, տեղահանվածները հաճախ գրանցվում էին տարբեր համայնքներում՝ կրկնակի աջակցություն ստանալու համար: Այս դեպքերը հիմնականում տեղի են ունեցել տեղահանման առաջին շաբաթների ընթացքում: Սակայն, միասնական տեղեկատվական համակարգի ստեղծմամբ նման խնդիրները մեղմվեցին, քանի որ տեղահանվածները ստիպված էին գրանցվել առցանց:

✓ **Աջակցություն տրամադրողների և ՏԻՄ-երի միջև համագործակցության բացակայություն.** Որոշ դեպքերում ՀԿ-ները և միջազգային կազմակերպությունները աջակցության ծառայություններն իրականացրել են առանց ՏԻՄ-երի հետ համագործակցելու:

Ընդհանրապես, լավ կլիներ, որ համագործակցություն լիներ, և բոլոր կազմակերպություններն ու պետական կառույցները ունենային միասնական բազա, որպեսզի տեսնեին, թե ինչ աջակցություն է ցուցաբերվում յուրաքանչյուրին, հետագայում սոցիալական անարդարությունից խուսափելու համար: Որպեսզի այնպես չլինի, որ մեկը ավելի շատ աջակցություն ստանա, իսկ մյուսը՝ ընդհանրապես չստանա: (Սոցիալական աշխատող, Երևան)

Հետևաբար, ԱՏՀ-ների ժամանակ հարցվողները դժվարանում են գնահատել՝ արդյոք ՊՏԿ-ները ստացել են այդ աջակցությունը՝ ելնելով իրենց կարիքներից, թե ոչ: Տեղահանման սկզբնական շրջանում օգնության տրամադրումը եղել է հիմնված միայն կառավարության կողմից այդ պահին իրականացվող աջակցության ծրագրերի վրա: Այնուամենայնիվ, տեղահանումից որոշ ժամանակ անց, երբ գործընթացները որոշակիորեն կարգավորվել են, ՏԻՄ ներկայացուցիչները ՍԱ-երի միջոցով իրականացրել են կարիքների խորը գնահատում, ապա ուղղորդել տարբեր ծրագրեր՝ ըստ նրանց կարիքների:

✓ **Կառավարության քաղաքականության սահմանափակումներ.** ՏԻՄ ներկայացուցիչները և ՍԱ-երը դժվարություններ են ունեցել զինհաշմանդամ ունեցող ընտանիքների հետ աշխատելիս: Նրանք, ովքեր դե յուրե չունեն հաշմանդամության կարգավիճակ, բայց դե ֆակտո ունեն որոշակի ֆիզիկական խնդիրներ պատերազմի հետևանքով, չեն կարող օգտվել պետական աջակցության որոշակի ծրագրերից: Իսկ սոցիալական աշխատողները չունեն բավարար մեխանիզմներ՝ արձագանքելու այս ընտանիքների բողոքներին:

- ✓ **Սոցիալ-հոգեբանական աջակցություն ցուցաբերելու հմտությունների բացակայություն:** ՍԱ-երը և ՏԻՄ ներկայացուցիչները նշում են, որ ՊՏԿ-ների հետ աշխատելու ընթացքում իրենք նույնպես սոցիալ-

Հոգեբանորեն շատ ծանր էր: Երբ մտնում ես իրենց դրության մեջ, դա դեպիսիսի ազդեցություն է թողնում քեզ վրա: Դու ուզում ես ամեն կերպ օգնել իրենց, բայց հնարավորություն չունես, քանի որ նրանք այնքան շատ օգնության կարիք ունեն: (Սոցիալական աշխատող, Երևան)

Իմ բարեկամի տղան գոհվել է: Հայրը վաղուց է մահացել, մայրը, տատիկն ու քույրերն ամեն ինչ արեցին, որ նա կրթություն ստանա: Սովորեց, գնաց բանակ ու առաջին գոհերից մեկն էլ հենց ինքն էր: Ես խուսափում էի նրանց տուն գնալ, քանի որ մխիթարելու խոսքեր չունեի: (Սոցիալական աշխատող, Կոտայք)

հոգեբանական աջակցության կարիք են ունեցել: Բացի այդ, նրանք չունեն ծանր սոցիալ-հոգեբանական իրավիճակում գտնվող ՊՏԿ-ների հետ աշխատելու բավարար հմտություններ: Դա հանգեցրել է այն բանին որ նրանք պարզապես խուսափում են հոգեբանական ծանր իրավիճակում հայտնված կանանց հետ շփվելուց: Հիմնական դժվարություններն առկա են հատկապես որդեկորույս մայրերի հետ աշխատելիս:

- ✓ **Բյուրոկրատիա.** միջգերատեսչական համագործակցությունն ու հաղորդակցությունն այնքան էլ հարթ և առանց խոչընդոտների չի ընթանում ըստ ՏԻՄ ներկայացուցիչների և ՍԱ-երի: Խնդիրների լուծման գործընթացն իրականացվում է ոչ բավարար արագությամբ, գուցե գերժանրաբեռնվածության, համագործակցության մեխանիզմների բացակայության և պլանավորման պատճառով:


5.3 Պատերազմից տուժած կանանց և աղջիկների վերականգնում և ինտեգրում

Չեկույցի այս բաժինը ներկայացնում է կանանց ինտեգրման և վերականգնման հնարավորություններն ու խոչընդոտները. ո՞ր կարիքներն են բավարարվել, որո՞նք դեռ չեն բավարարվել, և ինչպե՞ս են տարբեր կառույցներ նպաստել ՊՏԿ-ների ինտեգրման և վերականգնման գործընթացին:

Պատկեր 17-ը ցույց է տալիս, որ երեխաների կրթական խնդիրները տեղահանվելուց 2,5 տարի անց հաղթահարել են հարցվածների կեսը, իսկ մնացած խնդիրները, ինչպիսիք են կացարանի բացակայությունը, ֆինանսական ռեսուրսների բացակայությունը և նույնիսկ ոչ պարենային ապրանքների պակասը, հաղթահարվել են ավելի քիչ հարցվածների կողմից:

Պատկեր 17. Բավարարված կարիքները տեղահանումից 2,5 տարի անց.

Q17. Մտածելով ներկայի մասին՝ ձեր տեղահանումից 2,5 տարի անց, որքանո՞վ են բավարարված ձեր հետևյալ կարիքները:




Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Ինչպես ցույց են տալիս քանակական հետազոտության արդյունքները (Պատկեր 18), **տեղահանված կանանց կեսից ավելին չի համարում, որ ՏԻՄ-երը և ՍԱ-երը նպաստել են իրենց ինտեգրման և վերականգնման գործընթացին:** Այս կառույցների կողմից կիրառված հիմնական մեխանիզմները, ինչպես նշում են կանայք, պարբերական բնույթ կրող զրույցներն են և դեպի տարբեր ծառայություններ կամ կազմակերպություններ ուղղորդումները:

Պատկեր 18. ՍԱ-երի և ՏԻՄ-երի աջակցությունը:

Q13. Ինչպե՞ս են համայնքի սոցիալական աշխատողներն աջակցել ձեզ՝ վերականգնվելու և նոր համայնքում ինտեգրվելու համար:
Q14. Ինչպե՞ս է համայնքի ղեկավարությունն աջակցել ձեզ՝ նոր համայնքում վերականգնման և ինտեգրման համար:




Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Մինևույն ժամանակ, կանայք գնահատում են համայնքային իշխանությունների աջակցության արդյունավետությունը ինտեգրման և վերականգնման գործընթացում մի փոքր արդյունավետ՝ համեմատած սոցիալական աշխատողների տված աջակցության հետ (Պատկեր 19):

Պատկեր 19. Սոցիալական աշխատողների և համայնքի ղեկավարության աջակցության արդյունավետությունը.

Q13.1 Որքանո՞վ էր արդյունավետ սոցիալական աշխատողի աջակցությունը ձեզ համար:
Q14.1 Որքանո՞վ է արդյունավետ եղել համայնքի ղեկավարության աջակցությունը Ձեզ համար:



Հիմք՝ 251 և 291 (նրանք, ում աջակցել են սոցիալական ՍԱ-ները և ՏԻՄ-ը): Տվյալները ներկայացված են %-ով:

ԱՏՀ-ների արդյունքները ցույց են տալիս, որ այսօր ՏԻՄ-երի և ՍԱ-ների կողմից քաղաքականության հստակ մեխանիզմներ չեն կիրառվում՝ աջակցելու ՊՏԿ-ների ինտեգրմանը և վերականգնմանը: Տարբեր համայնքներում մոտեցումները խիստ անհատական են՝ հիմնված անձնական/սուբյեկտիվ գործոնների վրա: Այնուամենայնիվ, կարելի է ընդգծել կիրառվող հետևյալ մեխանիզմները, որոնք նշվել են ԱՏՀ-ների ժամանակ ՍԱ-երի կողմից, պատերազմից տուժած կանանց ինտեգրման և վերականգնման գործում իրենց դերի մասին խոսելիս.

- Կարիքների գնահատում:** Չրույցներ կանանց հետ, առանցքային խնդիրների դուրս հանում և դրանց առաջնահերթությունների սահմանում:

2. **Անմիջական ուղղորդումներ.** Անմիջական ուղղորդում ՊՏԿ-ներին դեպի սոցիալական ծառայություններ և ծրագրեր, որոնք տվյալ պահին աջակցություն և օգնություն են տրամադրում: Այն կարող է ներառել կանանց ուղղորդումը դեպի տեղական առողջապահական կենտրոններ, համայնքային կազմակերպություններ կամ պետական մարմիններ, որոնք առաջարկում են այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են խորհրդատվությունը, իրավաբանական օգնությունը կամ մասնագիտական ուսուցումը:
3. **Ներգրվում համայնքային կյանքի մեջ.** համայնքային սոցիալական աշխատողները ներգրվում են ՊՏԿ-ներին աջակցության ծրագրերում՝ հիմնվելով կարիքների գնահատման վրա: Մա կարող է ներառել տեղական կազմակերպությունների և ղեկավարության հետ հարաբերությունների ստեղծում, համայնքի կարիքների գնահատում և իրազեկման ռազմավարությունների մշակում, որոնք մշակութային առումով համապատասխան են ու կիրառելի ՊՏԿ-ների համար:

Սակայն գործնականում ծանրաբեռնվածության պատճառով նրանք հաճախ դժվարանում են լիարժեք կատարել վերը նշված գործառնությունները: Հիմնականում խնդիրը արդիական է հատկապես քաղաքային բնակավայրերում:

Մեր սեփական նախաձեռնությամբ դժվար է աջակցություն տրամադրել: Սակայն չկա մի դեպք, որը մեզ հասցեագրված լինի, և մենք դրան ընթացք չտանք: Մենք ֆիզիկապես չենք կարող ՊՏԿ-ի բոլոր կարիքները բացահայտել: Մեր աշխատանքը մեկ ուղղությամբ չէ. Ամուսնալուծության, երեխայի տեսակցության և այլ հարցերի հետ կապված ամեն օր մասնակցում ենք դատական նիստերին: Օրն ամառուովում է, իսկ գործը՝ ոչ: (ՍԱ, Կոտայք)

Ի լրումն, ինտեգրման և վերականգնմանն ուղղված քայլեր ՏԻՄ-երի և ՍԱ-երի կողմից իրականացվում են միայն որոշակի ծրագրերի առկայության դեպքում: Այս ծրագրերը ներկայումս առավելապես իրականացվում են միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից: ՊՏԿ-ներին ուղղված պետական աջակցության ծրագրերի մասին խոսք չի գնում: Շատ հազվադեպ համայնքային ՍԱ-երն աշխատում են սոցիալական համախմբվածության և ներառականության խթանման ուղղությամբ՝ կազմակերպելով համայնքահեն միջոցառումներն ու տոնակատարությունները, որոնք միավորում են մարդկանց:


Կազմակերպություններից այս պահին աջակցության ծրագիր կամ առաջարկ չունենք: (ՍԱ, Երևան)

Եթե նորից լինի անհատ հովանավոր, որը նյութական աջակցություն կցուցաբերի կամ ծրագրեր կառաջարկի Արցախի ժողովրդին, մենք սիրով կանենք դա: Դա միանշանակ կարևոր է: (ՏԻՄ ներկայացուցիչ, Երևան)

Հարցվածների մեկ երրորդը գտնում է, որ իրենց կարիքները լիովին չեն գնահատվել, և նույնքան մասն էլ հայտնում է ուշացած աջակցության մասին: **Հարցվածների երկու հինգերորդը տեղահանվելուց հետո չի հանդիպել ինտեգրման և վերականգնողական հետ կապված դժվարությունների:**

Պատկեր 20. Ինտեգրմանն ու վերականգնմանն ուղղված աջակցության հետ առնչվող խնդիրներ.

Q11. Վերականգնման համար աջակցության հետ կապված ի՞նչ խնդիրների եք հանդիպել այս համայնք տեղափոխվելուց հետո:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Ըստ հարցման մասնակիցների՝ ՊՏԿ-ների ինտեգրմանը և վերականգնմանը նպաստող գործոններն են.

- 1. Կրթությունը և զբաղվածությունը.** Բոլոր կանայք համարում են, որ զբաղվածությունը հյուրընկալված համայնքում հաջող ինտեգրման կարևոր բաղադրիչ է: Առաջնային ինտեգրումն ավելի շատ մարտահրավեր է եղել Արցախի քաղաքային բնակավայրերից տեղահանված և ՀՀ-ում գյուղական համայնքներում վերաբնակություն հաստատած կանանց համար, որոնց համար նոր հմտություններ ձեռք բերելու բազմաթիվ խոչընդոտներ են եղել: Ընդհանուր առմամբ, կանայք կցանկանային աշխատանքի հնարավորություններ գտնել: Հետազոտությանը մասնակից շատ կանայք արդեն ունեն աշխատանք հյուրընկալված համայնքներում: Կանանց մի մասն էլ վճարովի աշխատանքի անցնելու ցանկություն կունենա, երբ իրենց անչափահաս երեխաները մեծանան կամ երբ կատարելագործած կլինեն իրենց մասնագիտական հմտությունները: Որոշ կանայք նշում էին, որ ՏԻՄ ներկայացուցիչների և/կամ միջազգային կազմակերպությունների կողմից իրենց ուղղորդել են կրթության և աշխատանքի, այն ժամանակ, երբ իրենք դեռևս պատրաստ չէին դրան: Անչափահաս երեխաներ ունեցող կանայք նշում են, որ կցանկանային աշխատել որպես վարսահարդ, մատնահարդար, խոհարար սակայն տանից: Կրթության մեջ ինտեգրվելը որոշ չափով դժվար է հատկապես ամուսնացած կանանց համար, հատկապես այրիների համար, որոնք վրա է դրված ընտանիքը կերակրելու հոգսը: Կանանց մի մասը դժվար է հարմարվում ՀՀ-ում աշխատանքային պայմաններին, քանի որ սովոր են ավելի բարձր

ՊՏԿ-ներին դժվար է համոզել ներգրավվել կրթական ծրագրերում: Բայց ներգրավվելուց հետո չեն ցանկանում, որ այն ավարտվի: Նրանք առաջին հերթին աշխատանքի հնարավորություն են ուզում, քանի որ անհասպտղ լուծում են գտնում իրենց խնդիրների համար: Իսկ ուսումը երկարաժամկետ է, պետք է սովորեն, որ հետո նոր աշխատանք գտնեն: (Սոցիալական աշխատող, Երևան)

աշխատավարձերի, իսկ Հայաստանում աշխատավարձերը դիտվում են ցածր ՊՏԿ-ների կողմից:

2. **Լավ հարաբերությունները համայնքի բնակիչների հետ.** Փոխօգնության մթնոլորտը, համայնքի բնակիչների բարությունը և հյուրընկալությունը օգնում են տեղահանված կանանց արագ

Մենք երբ եկանք այս համայնք, հանդիպեցինք համայնքի բնակիչների ջերմ վերաբերմունքին մեր նկատմամբ: Մեզ հյուր եկան ու օգնեցին. մեկը բնակարանով, մյուսը՝ անկողնային պարագաներով, հագուստով: Նրանց հոգատար վերաբերմունքի շնորհիվ մենք հաղթահարեցինք առաջնային հարմարման փուլը: Հետո մենք մտերիմ ընկերներ դարձանք, ծանոթի միջոցով աշխատանք գտանք և մնացինք այստեղ (20-45տ. Չամունացած, ՊՏԿ, մարզեր)

ինտեգրվել և վերականգնվել համայնքային կյանքում: Կանանց մեծամասնությունը դրական է արտահայտվում իրենց տեղական համայնքում ունեցած հարաբերությունների մասին և նշում, որ իրենց հարևանների կողմից ընդունված են զգում: ՖԽԶ-ների ժամանակ շատ կանայք նշում էին տեղի բնակչության հետ շփվելու ավելի շատ հնարավորություններ ունենալու պատրաստակամության մասին: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում հայտնում էին նաև, որ բախվել են հարևանների կողմից խտրական վերաբերմունքի, այդ թվում՝ աշխատանքի դիմելու ժամանակ:

3. **Երեխաների առկայությունն առհասարակ և նրանց հարաբերական ինտեգրումը հյուրընկալող համայնքում.** Երեխաների գոյությունն օգնում է ՊՏԿ-ներին ավելի ուժեղ զգալ: Բացի այդ, երեխաների կրթական համակարգում (դպրոց, մանկապարտեզ) արագ ինտեգրվելը զսպում է կանանց այլ համայնք տեղափոխվելու հարցում, խուսափելու համար երեխաներին կրկնակի հոգեբանական սթրեսի ենթարկելուց:

4. **Հարազատների, այլ տեղահանված կանանց առկայությունը տվյալ համայնքում.** Ամուր ընտանեկան կապերը համայնքում նպաստում են կանանց արագ ինտեգրմանը հյուրընկալող համայնքներում:

5. **Հայաստանը և հատկապես հյուրընկալող համայնքը սիրելու փաստը.**

6. **Տեղահանված կանանց ուժեղ կամային հատկանիշները.**

Հետազոտության բոլոր թիրախային խմբերը հաճախ նշում են, որ արցախցի կանայք ավելի ուժեղ են, հոգեբանորեն կայուն և սթափ, քան տեղաբնակ կանայք և անգամ ՍԱ-երը: Հարկ է նշել, որ ՍԱ-երի կարծիքով՝ ՊՏԿ-ներն ավելի արագ են ինտեգրվում, քան տղամարդիկ: Հետազոտության մասնակիցները երևույթը բացատրում են գենդերային դերերով, քանի որ երեխաներին վերաբերող խնամքը կանանց վրա է, ուստի

Ոչ մի խոչընդոտ չի եղել, որ ասենք, թե այդ կանայք իրենց օտար են զգում: Անգամ Շինուհայրում գնացել էին մազերը ներկելու, մատնահարդարի կոնսակտներ էին հարցնում: Դա առաջացրել է գրուդի կանանց զայրույթը, որ մենք մեր տղամարդկանց ուղարկել ենք պատերազմ, իսկ դուք եկել եք գեղեցկության սրահ: (ՏԻՄ ներկայացուցիչ, Սյունիք)

Նրանք շատ հետաքրքիր բնավորություն ունեն. միշտ պատրաստ են, միշտ զինվոր են, իրենց հետ կատարվածը նորմալ են համարում: Ես ավելի ընկնված էի, քան իրենք: Եվ երիտասարդ աղջիկները, և տաստիկները, և նրանք, ովքեր սպասում էին ամուսիններին (ՏԻՄ ներկայացուցիչ, Երևան)

նրանք փորձել են ավելի արագ ինտեգրվել աշխատանքին, համայնքային կյանքին, լուծել երեխաների հետ կապված խնդիրները:

Հետազոտության մասնակիցների կարծիքով՝ պատերազմից տուժած կանանց ինտեգրմանը և վերականգնմանը խոչընդոտող խնդիրները հիմնականում կապված են.

1. **Սոցիալ-հոգեբանական խնդիրների հաղթահարման դժվարությունները.**

Ինչպես արդեն նշվեց, երեխաների հետ կապված սոցիալ-հոգեբանական խնդիրները մեծապես հաղթահարված են: Իրենց տների, ամուսինների, որդիների կամ հարազատների կորուստը նշվում են որպես չհաղթահարված սոցիալ-հոգեբանական խնդիրներ, որոնք խոչընդոտում են ինտեգրմանը և վերականգնմանը: Չինհաշմանդամ ունեցող ընտանիքների կանայք հայտնում են գոհերի ընտանիքների առաջ մեղքի զգացման մասին, այն առումով, որ իրենց հարազատները ողջ են, իսկ նրանցը՝ չեն վերադարձել:

Դու տառապում ես, քանի որ մոտածում ես, թե դու լավն ես, քան մյուսները, որոնց եղբայրները չեն վերադարձել: Հիմնականում նման խոսակցությունները շատ են: Ամեն կիրակի վատ հիշողություն կա, վատ բանի ես սպասում: Յուրաքանչյուր ժպիտ քեզ ստիպում է վատ զգալ, որ ժպտում ես: (20-45 տարեկան, չամուսնացած, ՊՏԿ, մարզեր)

2. **Ստիգման և խտրականությունը.** որոշ ՊՏԿ-ներ բախվում են ստիգմայի և խտրականության իրենց կարգավիճակի պատճառով՝ որպես տեղահանված կամ հակամարտությունից տուժածներ: Սա սահմանափակում է նրանց սոցիալ-տնտեսական ինտեգրման հնարավորությունները և առաջացնում է մեկուսացած ու մարգինալ լինելու զգացողություններ: ՄԱ-երը հաճախ նշում են, որ այդ բացը վերացնելու մեխանիզմներ չունեն: Շատ հաճախ ՄԱ-երն իրենց խոսքում նշում են, որ ինտեգրումը պայմանավորված է տվյալ անձի հաղորդակցման հմտություններով: Մարդամոտ, շփվող մարդիկ են ինտեգրվում են, իսկ չշփվողները՝ ոչ: Հարկ է նշել, սակայն, որ վերջին խմբի հետ հատուկ աշխատանք չի իրականացվում:

Կա մի փոքրամասնություն, որը ոչ թե դժկամ է, այլ թերահավատ արցախցիների նկատմամբ. Կամ գուցե կասկածում են կրթական մակարդակի վրա և գերադասում են աշխատանքը տեղացիներին տալ: (20-45տ., ամուսնացած, ՊՏԿ, Երևան):

3. **Տարիքային առանձնահատկությունները.** Տեղահանված տարեց կանայք առանձնացվում են որպես ադապտացիոն դժվարություններ ունեցող խմբերից մեկը: Նրանք իրենց անօգնական են զգում, քանի որ ուշադրությունը հիմնականում ավելի երիտասարդ կանանց վրա է: Նրանք դիտվում են որպես իրենց մշակութային արժեքներում խիստ ամրապնդված և չեն հարմարվում տեղական մշակույթին, սովորույթներին, կյանքին և ընդհանրապես շրջակա միջավայրին: Նրանք կարոտում են իրենց տունը, բնությունն ու կլիման: Բացի այդ, այս խումբը աշխարհի հետ շփվելու շատ քիչ հնարավորություններ ունի՝ նրանք չեն աշխատում, չեն սովորում, չեն օգտվում անգամ ինտերնետից:

4. **Վարքային առանձնահատկությունները.** ՊՏԿ-ներին ուղղված աջակցությունների հոսքը, ապա դրանից բխող հետագա սպասելիքները երբեմն դժվարություններ են ստեղծել համայնքային հարաբերություններում:

Նշվում է, որ որոշ խնդիրներ կապված են ՊՏԿ-ի պահանջկոտ վարքագծի հետ: Տեղահանված կանայք փորձել են ավելի շատ աջակցություն պահանջել, մինչդեռ համայնքի բնակիչները, հատկապես սոցիալապես անապահով խավերը, բողոքել են, որ իրենց խնդիրները դուրս են մնացել պետության ուշադրությունից:

5. **Կրթության և աշխատանքի հնարավորությունների բացակայությունը.** Ըստ հետազոտության մասնակիցների թե՛ կրթությունը, թե՛ զբաղվածությունը ՊՏԿ-ի ինտեգրման համար գլխավոր նախապայմաններն են: Այնուամենայնիվ, շատ տեղահանված կանանց համար աշխատանքի մտնելը կարող է շատ դժվար լինել, հաճախ այն պատճառով, որ նրանք կարող են պարզապես ցանկություն չունենալ աշխատելու, կամ ունենալ լեզվի ու մտածելակերպի տարբերություններ: Բացի այդ, համայնքներում (հատկապես գյուղական) աշխատատեղերի շատ սահմանափակ հնարավորություններ կան, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են տեղահանված կանանց ձգտումներին: Երևույթը բացատրվում է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով: Մի կողմից՝ առկա աշխատատեղերը բավարար չեն վարձատրվում՝ տան վարձը և ապրուստը վաստակելու համար, մյուս կողմից՝ արցախցի կանայք սովոր են ավելի բարձր աշխատավարձերի կամ ձգտում են ավելի բարձր որակավորում պահանջող աշխատանքների:
6. **Մշտական բնակության բացակայությունը.** Ինտեգրմանը խոչընդոտում է նաև հստակ բնակավայր չունենալու անորոշությունը: Շատ ընտանիքներ դեռ չեն կողմնորոշվել՝ որտեղ գնել բնակարան, կամ արդյո՞ք վարձակալած բնակարանի տերերը իրենց դուրս կհանեն այդ բնակարանից թե ոչ, և եթե այո, ապա՝ ուր պետք է գնան այդ դեպքում: Հետևաբար, նման դեպքերում դեռևս առկա է դիմադրություն հյուրընկալող համայնքի կյանքում լիարժեք ինտեգրվելու և վերականգնման համար: Նրանք դեռևս ունեն այնպիսի ֆինանսական դժվարություններ հաղթահարելու խնդիրներ, ինչպիսիք են կոմունալ ծառայությունների վճարումը, տան վարձը և այլն: Նրանք նշում են, որ Արցախի իրենց բնակավայրերում բնակարանների և կոմունալ վարձավճարները բավականին մատչելի են եղել:
7. **Մշակութային և լեզվական խոչընդոտները.** Որոշ ՊՏԿ-ներ բախվում են մտածելակերպի և լեզվական խոչընդոտների, որոնք սահմանափակում են նոր միջավայրերում ընդգրկվելու և համայնքի մյուս անդամների հետ հարաբերություններ ստեղծելու նրանց կարողությունները: Ինչպես նշում են հետազոտության մասնակիցները, տեղահանված կանայք ունեն ավելի «ազատ» մտածելակերպ, «ազատ» հագնվելու ոճ, «ազատ» դիմահարդարում, ինչը հանդիպում է համայնքի բնակիչների դիմադրությանը, և վերջիններս սկսում են խուսափել նրանց հետ շփվելուց:

8. Հավատ՝ վերադառնալու իրենց կորցրած բնակավայրերը.

Շատ կանայք մինչ օրս հավատում և ակնկալում են, որ կվերադառնան իրենց բնակության վայրերը, ուստի նրանք չեն փորձում «խորը արմատներ գցել» իրենց ընդունող համայնքներում: Դա ավելի է դժվարացնում ինտեգրման գործընթացը:

Մորաքույրս այստեղ է, ամեն կերպ աջակցում է մեզ, բայց մենք չենք հարմարվել: Կարծում ենք, որ գնալու ենք մեր գյուղ, մեր տուն: Մենք մտովի պատկերացնում ենք դա: Մենք տեսնում ենք տները քանդված, բայց դրա հետ էլ ենք համաձայն, կգնանք, նորից կկառուցենք: Գյուղում բոլորը մեզ լավ են վերաբերվում, մենք ուղղակի կարոտում ենք մեր տունը: (20-45տ, Ամուսնացած, ՊՏԿ, մարզեր):

9. Համայնքների սահմանափակ ռեսուրսները. համայնքները հաճախ բացահայտում են ՊՏԿ-ների կարիքները, սակայն չեն կարողանում օգնել ինտեգրմանը համապատասխան մեխանիզմների և ռեսուրսների բացակայության պատճառով: Հիմնական խնդիրները կրթությունն ու զբաղվածությունն են, որոնց տրամադրման համար համայնքները լրացուցիչ աջակցության կարիք ունեն:

10. Պատերազմից տուժած լինելու աստիճանը. Այն ՊՏԿ-ները, ովքեր

ընտանիքում ունեն գոհ պատերազմի հետևանքով, ամենադժվարն են ինտեգրվում և վերականգվում մնացածի համեմատ: Հիմնական պատճառը ընտանիքի անդամի/ հարազատների մահվան վիշտն է: Նաև ՍԱ-երի և ՏԻՄ-երի մոտ բացակայում են այս խմբի հետ աշխատելու հստակ մեխանիզմները: Հիմնական մեխանիզմը, որն օգտագործվում է շատ հազվադեպ դեպքերում, կանանց այս խմբին միջոցառումների հրավիրելն է, տոներին նվերներ մատուցելը և գոհվածների հիշատակի երեկոներ կազմակերպելը: Մշակութային ավանդույթներն ու մտածելակերպը նույնպես խոչընդոտ են այս խմբի կանանց ինտեգրման և վերականգնման համար: Այսպիսով, համայնքի տարեց բնակիչները չեն ընդունում այրիների մասնակցությունը համայնքային կյանքին և միջոցառումներին: Կանայք, ովքեր ամուսնու մահից հետո ապրում են իրենց ամուսնու ծնողների հետ, սահմանափակված են իրենց շփումներում և հարաբերություններում համայնքի մյուս բնակիչների հետ:


Կրկնակի ծանր վիճակում են Սյունիքի այրիները. Այստեղ մտածելակերպն այլ է, և այրիները չեն շփվում համայնքի անդամների հետ: Կան 21-22տ. այրիներ, որոնց համար կյանքը կարծես թե կանգ է առել, քանի որ ծնողների պահպանողական մտածելակերպի պատճառով նրանք նույնիսկ տանից դուրս չեն գալիս: (25-45տ., Չամուսնացած, ՊՉԿ, մարզեր):

Ռիսկերի հաղթահարման, ինտեգրման և վերականգնման հետ կապված հարցերում որպես իրենց աջակցող կառույցներ ՊՏԿ-ները հիմնականում նշում են միջազգային կազմակերպություններին և ՀԿ-ներին: Պետական կառույցների կողմից սոցիալ-հոգեբանական ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների մասին չի նշվում հետազոտության մասնակիցների կողմից: Նշված առանցքային կազմակերպություններն են՝ ՎՎ-ն, ՅՈՒՆԻՍԵՖ-ը, «Առաքելություն Հայաստան»-ը, «Մարդը կարիքի մեջ»-ը և այլն:

Հարցվածների ճնշող մեծամասնությունը (83%) ծանոթ է Վորլդ Վիժնին, և նրանց գրեթե կեսը երբևէ ներգրավված է եղել կազմակերպության որևէ ծրագրում: Նրանց

կեսից ավելին բարձր է գնահատել բավարարվածությունն ու օգտակարությունը միջամտություններից:


Պատկեր 21. Իրագրվածությունն ու բավարարվածությունը ՎՎ-ից:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

ՎՎ-ի կողմից իրականացվող ծրագրերի ամենաառաջնային ներդրումը համարվում է համայնքային կյանքում ինտեգրվելու և սոցիալ-հոգեբանական խնդիրների հաղթահարմանը օժանդակելը :

Պատկեր 22. ՎՎ-ի ծրագրերի ներդրումը:



Հիմք՝ 211 (Նրանք, ովքեր ներգրավված են եղել ՎՎ-ի նախագծերում): Տվյալները ներկայացված են %-ով:

Հարցվածների 33%-ը տեղյակ է այլ կազմակերպությունների կողմից իրականացվող աջակցության ծրագրերի մասին, իսկ նրանցից 28%-ը մասնակցել է այդ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին: Գոհունակությունը կրկին բավականին բարձր է (77%):

ՖԽԶ-ներին մասնակցած ՊՏԿ-ներից շատերն ընդգծում են, որ իրենք շարունակում են մեծապես ապավինել ծառայություններ մատուցողներին կամ ՀԿ-ներին աջակցության համար անգամ տեղիանման սկզբնական շրջանից հետո: Հարցվածների 74%-ը նշել է, որ դեռևս մասամբ է հաղթահարել սոցիալ-հոգեբանական խնդիրները: Նշված խնդիրների հաղթահարման դժվարություններն արձանագրում է հիմնականում 56+ տարիքային խումբը (29%): Մարզերում (13%) ավելի շատ մարդ է ամբողջությամբ հաղթահարել սոցիալ-հոգեբանական խնդիրները, քան Երեւանում (8%):

5.4 Պատերազմից տուժած կանանց ընկալումները ՄԱԿ ԱԽ 1325-ի վերաբերյալ

2000 թվականին ՄԱԿ Անվտանգության խորհուրդը հաստատեց **1325 բանաձևը**, որը նշանավորեց Կանայք, Խաղաղություն և Անվտանգություն օրակարգի մեկնարկը: Բանաձևը խրախուսում է կանանց **մասնակցությունը** խաղաղության նախաձեռնություններին, **պաշտպանությունը** նրանց մարդու իրավունքների խախտումներից և հակամարտությունների **կանխարգելումը**: Դրանից հետո հաստատվել է ևս ութ բանաձև՝ ընդլայնելով օրակարգում ընդգրկված հարցերի շրջանակը և դրանով իսկ ավելի հավակնոտ դարձնելով այն: Օրակարգում ներառված պարտավորություններից է ազգային գործողությունների ծրագրերի մշակումը: Սրանք ռազմավարական փաստաթղթեր են, որոնք սահմանում են երկրի նպատակներն ու նախաձեռնությունները Կանանց, Խաղաղության և Անվտանգության (ԿԻՄԱ) օրակարգի իրականացման համար: Մինչ օրս 79 երկիր է մշակել նման ծրագիր, այդ թվում՝ Հայաստանը:

Սույն հետազոտության որակական մասի շրջանակներում քննարկվել են նաև կանանց ընկալումները խաղաղությանն ուղղված նախաձեռնություններում կանանց մասնակցության, մարդու իրավունքների խախտումներից պաշտպանվելու և հակամարտությունների կանխարգելման վերաբերյալ:

Ըստ հետազոտության մասնակիցների, ՊՏԿ-ները տարբերվում են մյուս կանանցից իրենց ունեցած դժվարություններով և սոցիալ-հոգեբանական փորձառություններով, ինչպիսիք են՝ խտրական վերաբերմունքը ընդունող համայնքի բնակիչների կողմից, ընտանիքի անդամին կամ հարազատին կորցնելու վախը, բնակության վայրի, ապրուստի միջոցների, և ընտանիքի անդամ/հարազատների կորուստը: Երեխաներ ունեցող կանանց դեպքում այս մարտահրավերները կրկնակի ծանր են, քանի որ նրանց մտքերը ուղղված են ոչ միայն իրենց, այլև դեպի երեխաներ: Հոգեբանական ծանր փորձառությունները լուրջ հետևանքներ են ունենում այս կանանց առողջության վրա:

Մտքեր են ունեցել, շատ են մտածել ու հիվանդություն են ձեռք բերել: Ինձ վիրահատել են. Դա պայմանավորված էր իմ մտքերով և վախերով: (25-45տ., Ամուսնացած, ՊՏԿ, մարզեր):

Ինչպես ուսումնասիրության արդյունքները վկայում են, **ՊՏԿ-ները դուրս են մղված պլանավորման և որոշումների կայացման բոլոր մակարդակներից ու հնարավորություն չունեն մասնակցելու մարդասիրական արձագանքման պլանավորմանը և խաղաղության/անվտանգության ապահովման ջանքերին:**

ՊՏԿ-ներն իրենց դերը համայնքի որոշումների կայացման գործընթացում տեսնում են համայնքային հանդիպումներին մասնակցելու միջոցով: Ենթադրվում է, որ կանայք կարող են ավելի արագ և համապատասխան որոշումներ կայացնել, քան տղամարդիկ, հիմնականում, երբ որոշումները կապված են իրենց կամ այլ կանանց, երեխաների կամ համայնքային մակարդակի կարիքների և սոցիալական բարեկեցության խնդիրների հետ: Սակայն նրանք՝ հատկապես անչափահաս երեխաներ ունեցող և իրենց ամուսիններին կորցրած կանայք, հիմնականում այնքան էլ ակտիվ չեն մասնակցում ժամանակի սղության պատճառով՝ կրելով իրենց ընտանիքներին կերակրելու պատասխանատվությունը:

ՄԱ-երի և ՏԻՄ ներկայացուցիչների կարծիքով՝ ՊՏԿ-ների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում կրում է ոչ համակարգված բնույթ և կախված է համայնքի ղեկավարի անձնական մոտեցումներից: Որոշ համայնքներում տեղահանված կանանցից մի քանիսը (1-2) աշխատանքի են ընդունվել ՏԻՄ-երում: Ըստ հետազոտության մասնակիցների, նրանք ակամայից դառնում են միջնորդ, ովքեր համայնքային հանդիպումներում բարձրացնում են իրենց «բախտակիցների» ձայնը:

Որոշ համայնքներում խորհրդակցություններին հրավիրում են կանանց, սակայն, ըստ ԱՏՀ-ների մասնակիցների, կանանց մասնակցությունն ու ակտիվությունն այս հարցում այդքան էլ մեծ չէ: Այսպիսով, կանայք կամ դժվարանում են մասնակցել այդ խորհրդակցություններին՝ ծանրաբեռնվածության պատճառով, կամ հաճախելիս հիմնականում պասիվ են և կարծիք չեն հայտնում: Հիմնականում բոլոր ԱՏՀ-ները նշում են, որ հենց կանայք են մեծամասամբ բոլոր հարցերով դիմում ՏԻՄ-երին: Երևույթը պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ իրենք միայնակ են տեղահանվել, քանի որ տղամարդիկ մնացել են պատերազմի դաշտում: Հետագայում, երբ տղամարդիկ վերադարձել են, միևնույնն է կանայք են կրկին շարունակում դրսևորել հիմնական նախաձեռնությունը ՏԻՄ-երին դիմելիս, քանի որ նրանք ավելի ակտիվ են, իրագրել և հեշտությամբ են ինտեգրվում համայնքին:

Քանի որ մենք գործ ունենք հիմնականում կանանց հետ, մեզ դիմում են կանայք, ուստի, այո, նրանք մեծ դեր ունեն որոշումների կայացման գործում: Քանի որ խնդիրներն իրենք են լուծում, իրանց միջոցով են լուծումները տրվում, հետևաբար նրանց գործոնը մեծ է: Կանայք ավելի ճկուն են, քան տղամարդիկ: (ՏԻՄ ներկայացուցիչ, Երևան)

Որոշ համայնքներ համայնքային նշանակության հարցերը, տեղադրում առցանց հարթակներում քննարկման համար, սակայն այստեղ ևս կանանց ակտիվությունը գրեթե բացակայում է:

ԱՏՀ-ների ժամանակ մասնակիցները կանանց պասիվությունը բացատրում են նաև մենթալիտետի փաստով: Ընդունված չէ, որ կանայք մասնակցեն համայնքային ժողովներին, ակտիվ լինեն և բարձրաձայնեն խնդիրների մասին: Անգամ համայնքների ավագանիների նիստերի ժամանակ կանանց ակտիվությունը բավականին ցածր է գնահատվում:

Ինչ վերաբերում է **պաշտպանությանը**, կանայք իրենց դերը հիմնականում տեսնում են ոչ թե մարտի դաշտում, այլ թիկունքում՝ որպես սնունդ մատակարարող, տղամարդկանց հոգեբանական աջակցություն և առաջին բուժօգնություն ցուցաբերող:

Երբ տղամարդը հասկանում է, որ իր հետևում կին է, դա նրան ուժ է տալիս: Երբ իմացան, որ իրենց թիկունքում ոչ ոք չի սպասում, գյուղը դատարկվել է, իրենք էլ են ընկնվել: Դա նույնպես ազդեց մեր պարտության վրա: (20-50տ., չամուսնացած, ՊՏԿ, մարզեր)

Այս տեսակետից կանայք հիմնականում կարիք ունեն առաջին օգնության, ինքնապաշտպանության, կացարաններից օգտվելու և արագ կողմնորոշվելու հիմնական հմտությունների զարգացմանը: Հիմնականում, ըստ հետազոտության մասնակիցների, նման հմտությունների զարգացման ուղղությամբ աշխատանքներ են տարվում դպրոցներում: Բայց կանայք կարևորում են ավելի հետևողական և պարտադիր կրթական ծրագրերը բոլոր կանանց շրջանում:


Կանայք դժվարանում են շատ ենթադրություններ անել **խաղաղության կառուցման և քաղաքական մթնոլորտի փոփոխության գործում կանանց դերի մասին**: Հիմնականում խոսում են կնոջ՝ որպես մոր սոցիալական դերի մասին: Այս տեսանկյունից կնոջ դերը կարևոր է այն առումով, որ նա դաստիարակում է երկրի համար ճիշտ քաղաքացի և մեծ ներդրում ունի երեխաների կրթության ու դաստիարակության գործում:

Կանանց իրավունքների և դերերի վերաբերյալ դասընթացները արժևորվում են հետազոտությանը մասնակցած կանանց մեծ մասի կողմից: Նրանք կարծում են, որ կան կանայք, ովքեր լավ չգիտեն իրենց իրավունքները, և որ իրավունքների իմացությունը կօգնի բարձրացնել կնոջ դերը հասարակության մեջ:

5.5 Կայունություն

Տեղահանված կանայք դեռևս դժվարությամբ և անորոշությամբ են տեսնում իրենց ապագան: Հիմնական մասը փորձում է լավատես լինել: Ինչպես ցույց է տալիս Պատկեր 23-ը, կանանց չորս հինգերորդ մասը մասամբ հարմարվել է իրականությանը:

Պատկեր 23. Հայացք դեպի ապագա:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով


Չհարմարվածների մեծամասնությունը դեռևս բնակարանային խնդիրներ ունեցողներն են: Նրանցից ոմանք հույս ունեն վերադառնալ իրենց բնակության վայր, ոմանք՝ չեն կողմնորոշվել մշտական բնակության վայրի հարցում, ոմանք էլ՝ բավարար միջոցներ չունեն բնակարանային խնդիրները լուծելու համար:

Հազվագյուտ դեպքերում ՊՏԿ-ները նշում են սոցիալ-հոգեբանական աջակցության անհրաժեշտության մասին: Ավելի շուտ նրանք ցանկանում են խաղաղության հաստատում և անվտանգության վիճակի կայունացում, ապա նոր կկարողանան վերականգնվել ու ինտեգրվել: Նրանք չեն ընդունում իրենց բնակավայրերի և ընտանիքի անդամների կորուստը, ուստի կարծում են, որ ոչ մի սոցիալ-հոգեբանական աջակցություն չի կարող օգնել իրենց հաղթահարել այդ կարոտը:

Միակ աջակցությունը, որ նրանք ակնկալում են կառավարությունից, կացարանն ու աշխատանքի հնարավորություններն են: Քանակական հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս նաև (Պատկեր 24), որ տեղահանված կանայք ավելի շատ ֆինանսական ռեսուրսների, բնակարանի և աշխատանքի կարիք ունեն:

Պատկեր 24. Ապագայի համար անհրաժեշտ աջակցությունների ձևերը.

Q29. Հատկապես ի՞նչ աջակցության կարիք ունեք ձեր լիարժեք ինտեգրման համար:




Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Քանակական հետազոտության շրջանակներում տեղահանված կանանց կեսից ավելին նաև նշում է, որ իրենք բավարար ռեսուրսներ չունեն ապագայում ինքնուրույն լուծելու ինտեգրման և վերականգնման հետ կապված իրենց խնդիրները:

Պատկեր 22. ՊՏԿ-ների ներուժի ինքնագնահատումը ռիսկերը մեղմելու համար:

Q30. Ի՞նչ եք կարծում, ունե՞ք բավարար ռեսուրսներ՝ ապագայում առանց արտաքին միջամտությունների Ձեր կենսագործունեությունն ապահովելու համար:



Հիմք: 556. Տվյալները ներկայացված են %-ով

Ավելին, արտաքին աջակցության անհրաժեշտության մասին հիմնականում նշել են 46+ տարեկան ներկայացուցիչները (65%)՝ մինչև 45 տարեկանների (50%) համեմատ: Երևանում բնակվող տեղահանված կանայք 12%-ով ավելի շատ արտաքին աջակցության կարիք ունեն մարզերում ապրողների համեմատ (64% Երևան, 52% այլ քաղաքային և գյուղական համայնքներ):

ՏԻՄ-երը և ՍԱ-երը հետևյալ քայլերն են տեսնում ՊՏԿ-ների ինտեգրման ու վերականգնման պրոցեսները հեշտացնելու համար.

- **Միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում.** այն կօգնի յուրաքանչյուր համայնքին ունենալ իր բնակիչների կարիքները և համապատասխան վերլուծությունների արդյունքում ուղղորդումներ կատարել: Դա կօգնի նաև կազմակերպել աջակցության ծառայություններ՝ խուսափելով աջակցության կրկնակի տրամադրումից:

- **ՊՏԿ-ների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում.** Սոցիալական աշխատողների կարծիքով՝ կանանց ինքնադրսևորվելու իրավունք տալը օգնում է մեղմել նրանց վախերը:
- **Զբաղվածության և կրթության հնարավորությունների ապահովումը.** կրթությունը և զբաղվածությունը միանշանակ նպաստում են արագ ինտեգրմանը և վերականգնմանը:
- **Դասընթացների կազմակերպումը.** Արտակարգ իրավիճակներում կանանց դերի և նշանակության վերաբերյալ սեմինարների կազմակերպումը կարևորվում է առանցքային տեղեկատուների կողմից: Շատ կանայք տեղահանման սկզբնական փուլում դժվարությունների են հանդիպել, քանի որ իրենց հետ չեն ունեցել անհրաժեշտ փաստաթղթեր, խնայողություններ և համապատասխան հագուստ: Նման դասընթացները նաև կնախապատրաստեն կանանց՝ պատշաճ կերպով պատրաստ լինելու նման իրավիճակներին:
- **Նախապես սահմանված ապաստարաններ յուրաքանչյուր համայնքի համար՝ օգտագործելու տեղահանվածների համար.** ՏԻՄ-երի կողմից կարևորվում է տարբեր բնակավայրերում նախապես որոշված համայնքային նշանակության շենքերի առկայությունը՝ այդ տարածքները որպես ժամանակավոր կացարան տրամադրելու նմանատիպ իրավիճակներում գտնվող տեղահանված անձանց: Դա կօգնի խուսափել խուճապից, ինչպես դա եղավ 2020 թվականին:

Համայնքային սոցիալական աշխատողները նշում են հետևյալ աջակցությունների կարիքները՝ ՊՏԿ-ների հետ աշխատելու համար.

- **Սոցիալ-հոգեբանական աջակցություն.** Պատերազմից տուժած կանանց հետ աշխատելիս էմոցիոնալ ճնշումը բարձր է, ուստի ՍԱ-երը զգում են նաև սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք:
- Պատերազմից տուժած կանանց հետ աշխատելու **հոգեբանական հմտությունների զարգացում:**
- **Փափուկ հմտությունների զարգացում,** ինչպիսիք են պլանավորումը, ժամանակի կառավարումը և այլն, որպեսզի կարողանան հաղթահարել ծանրաբեռնվածությունը տեղահանման ծանր ժամանակաշրջաններում:
- **Ծնողական հմտություններ՝** աջակցելու ՊՏԿ-ներին երեխաների հետ աշխատելու համար:
- **ՊՏԿ-ների հետ աշխատելու հմտություններ.** Սոցիալական աշխատողները նշում են, որ իրենց փորձն ավելի հարուստ է սոցիալապես անապահովների, բայց ոչ տեղահանվածների հետ աշխատելու հարցում: ՊՏԿ-ների հետ աշխատելու հստակ մեխանիզմներ և մոտեցումները ՍԱ-ների մոտ բացակայում են:
- **Ուղղորդման ուղեցույցներ.** Համայնքային սոցիալական աշխատողներին անհրաժեշտ են ուղղորդման ուղեցույցներ, որտեղ թվարկված են համայնքում/տարածաշրջանում/երկրում հասանելի սոցիալական ծառայություններն ու ծրագրերը: Սա կարող է ներառել տեղեկատվություն ծառայությունների մատուցողների, իրավասության աստիճանի և ուղղորդման

գործընթացների մասին, ինչը հեշտացնում է պատերազմից տուժած կանանց համար անհրաժեշտ ծառայություններից օգտվելը:

- **Օրենսդրության վերաբերյալ դասընթացներ՝** իրավական հարցերի դեպքում պատշաճ ուղղորդում կազմակերպելու համար:

6. Եզրակացություններ

- Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է ասել, որ տեղահանվելուց հետո ՊՏԿ-ների ամենաշատ 3 ռիսկերն են՝ կացարանի բացակայությունը, ֆինանսական միջոցների բացակայությունը և գործազրկությունը: Տվյալները նաև փաստում են, որ տեղահանված կանանց բնակարանային (23%) և ֆինանսական (28%) խնդիրները մինչ օրս չուծված են, և որ դրանք հիմնական խոչընդոտներն են ՊՏԿ-ների սահուն ինտեգրման ու վերականգնման համար:
- Ամենաքիչ ընդգծված ռիսկերը կապված են երեխաների կրթության և անվտանգ խաղային միջավայրի հետ, քանի որ տեղահանվելուց հետո այդ խնդիրները շատ արագ լուծվել են: Այնուամենայնիվ, երեխաները սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք ունեն տեղահանման առաջին իսկ օրերից՝ ի տարբերություն կանանց: ՊՏԿ-ները սոցիալ-հոգեբանական խնդիրներ և մտավախություններ ունենում են պատերազմի առաջին օրերից, սակայն տեղահանությունից որոշ ժամանակ անց նրանք կենտրոնանում են այդ խնդիրների վրա: Համենայն դեպս, ՊՏԿ-ները չեն դիմում համայնքի սոցիալական աշխատողներին կամ ՏԻՄ-երին՝ սոցիալ-հոգեբանական աջակցության համար:
- Հաղորդակցության, տեղեկատվության և սոցիալական ծառայությունների, ներառյալ իրավաբանական օգնության բացակայության, երեխաների խնամքի ծառայությունների բացերի և ՊՏԿ-ների համար անհրաժեշտ սոցիալական ծառայությունների անհասանելիության մասին գրեթե չեն հիշատակվում հետազոտության մասնակիցների կողմից: Հիմնական աջակցություն տրամադրողներն են ՏԻՄ-երը, միջազգային կազմակերպությունները, ՀԿ-ները և համայնքի բնակիչները: Մինչդեռ սոցիալական աշխատողի ծառայությունների կամ սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցումը տեղի ունի հիմնականում միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների շնորհիվ: ՏԻՄ-երը հիմնականում ակտիվ են նյութական աջակցության բաշխման կազմակերպման գործում:
- Չնայած այն հանգամանքին, որ ՏԻՄ-երը մեծ ներգրավվածություն ունեն աջակցության տրամադրման գործում, նրանց աշխատանքից դժգոհների թիվն ամենաբարձրն է: Հիմնական խնդիրները հիմնականում կապված են ընդհանուր քաղաքականության և ուղղորդման համընդհանուր մեխանիզմների բացակայության հետ: Հիմնականում ՏԻՄ-երը գործել են սեփական փորձի, կարողությունների և հմտությունների շրջանակներում: Ուստի դրանք հանգեցրել են տեղահանվածների դժգոհությանը, քանի որ մատուցվող ծառայությունները տարբեր են եղել համայնքներում:
- Փաստերը վկայում են նաև, որ հումանիտար ծառայությունների/աջակցության տրամադրումը, ինչպիսիք են կացարանը, սննդամթերքը և ոչ պարենային ապրանքները, իրականացվել են՝ օգնելու ՊՏԿ-ներին գոյատևել և ապահովել իրենց բարեկեցությունը, սակայն այս լուծումները կարճաժամկետ են և չեն անդրադառնում ՊՏԿ-ների երկարաժամկետ կարիքների հաղթահարմանը վերականգնման և ինտեգրման տեսանկյունից: Համայնքների կյանում ՊՏԿ-

ների լիարժեք ինտեգրմանը աջակցելու համար էական է կայուն աջակցության ցուցաբերումը, որը վերաբերում է այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են կրթությունը, զբաղվածությունը և աշխատանքի համար վերապատաստումը: Ներդրումներ կատարելով երկարաժամկետ լուծումներում, որոնք հզորացնում են ՊՏԿ-ներին, կարելի է երաշխավորել, որ նրանք ունեն ռեսուրսներ և աջակցություն, որոնք անհրաժեշտ են իրենց կյանքը վերակառուցելու և իրենց համայնքներին իմաստալից ձևով նպաստելու համար:

- Կրթությունն ու զբաղվածությունը համարվում են ՊՏԿ-ների սահուն ինտեգրման և վերականգնման լավագույն ուղիները, սակայն նրանք դեռևս բախվում են զգալի խոչընդոտների իրենց համայնքներում կրթություն և աշխատանք ստանալու համար: Հարցն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները:
- ՊՏԿ-ների սոցիալական մեկուսացումը և պիտակավորումը առկա են մասամբ, հատկապես երբ խոսքը վերաբերում է աշխատանքի հնարավորություններին:
- ՊՏԿ-ների ինտեգրման և վերականգնման այլ հիմնական խոչընդոտներն են՝ տարիքային առանձնահատկությունները, մշակութային և լեզվական խոչընդոտները, մշտական բնակության բացակայությունը, իրենց կորցրած համայնքներ վերադառնալու հավատը, ազդեցության մակարդակը: Ամենադժվար վերականգնվող խումբը որդի կորցրած մայրերն են, որոնց մեծ մասը դեռ չի կարողացել հաղթահարել վիշտը: Բացակայում են նաև համայնքային սոցիալական աշխատողների համապատասխան հմտություններն ու մեխանիզմները՝ այդ կանանց հետ շփվելու և համապատասխան ուղղորդումներ կատարելու համար:
- Միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Վորլդ Վիժնի գործունեությունը բարձր է գնահատվում: Հարցվածների կեսից ավելին, ովքեր երբևէ ներգրավված են եղել համապատասխան ծրագրերում, գոհ են միջամտություններից:
- ՊՏԿ-ները դուրս են մղված պլանավորման և որոշումների կայացման բոլոր մակարդակներից ու հնարավորություն չունեն մասնակցելու մարդասիրական արձագանքման պլանավորմանը և խաղաղության/անվտանգության ապահովման ջանքերին: Հիմնականում ՊՏԿ-ները չեն ցանկանում ներգրավվել համայնքային որոշումների կայացման գործընթացներում:

7. Առաջարկություններ

Հետևաբար, շատ կարևոր է, որ համապատասխան քայլեր ձեռնարկվեն՝ աջակցելու ՊՏԿ-ների սահուն ինտեգրմանը և վերականգնմանը: Ուսումնասիրությունն օգնել է մշակել մի շարք առաջարկություններ՝ օգնելու հաղթահարել ՊՏԿ-ների առջև ծառայած մարտահրավերներն ու ռիսկերը:

Գործողություններ, որոնք պետք է կատարվեն ՊՏԿ-ների՝ ընդունող համայնքներ գալուց անմիջապես հետո.

- ✓ ՀՀ կառավարությունը, ՏԻՄ-երը, տեղական և միջազգային ՀԿ-ները ու անհատ բարերարները պետք է դիտարկեն մարդասիրական օգնության հնարավորությունը ՊՏԿ-ների համայնքներ ժամանելուն պես: Մասնավորապես. Այդ ժամանակահատվածում ՊՏԿ-ների հիմնական կարիքներն են կացարանները, պարենային և ոչ պարենային ապրանքները (շորեր, հիգիենիկ փաթեթ և այլն):
- ✓ ՀՀ կառավարությունը և ՏԻՄ-երը պետք է ապահովեն կանանց ֆինանսական կայունությունը և աշխատանքի տեղավորման հնարավորությունները, որպեսզի նրանք կարողանան հաղթահարել ժամանումից հետո առաջացող ֆինանսական դժվարությունները, որոնք դեռ երկար կարող են շարունակվել:
- ✓ ՀՀ կառավարությունը և ՏԻՄ-երը պետք է մտածեն ապագայի համար համապատասխան ապաստարաններ՝ նոր տեղահանվածներին (եթե այդպիսիք չեն) տրամադրելու համար, որպեսզի խուսափեն տեղահանված կանանց և երեխաների խուճապից և անվտանգության անմիջական վախից:
- ✓ ՏԻՄ-երը և տեղական ու միջազգային ՀԿ-ները պետք է հաշվի առնեն երեխաներին ժամանելուն պես սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը:

Գործողություններ, որոնք ուղղված են ՊՏԿ-ների վերականգնմանն ու ինտեգրմանը.

- ✓ ՏԻՄ-երը և ՄՄԾՏԿ-ն պետք է մտածեն տեղական ձեռնարկությունների հետ համագործակցության մասին՝ տեղահանված կանանց համար ֆորմալ կամավորական ծրագրեր կազմակերպելու նպատակով, որոնք կօգնեն նրանց ձեռք բերել աշխատանքային փորձ Հայաստանում և զարգացնել իրենց վստահությունը:
- ✓ ՀՀ կառավարությունը և մասամբ ֆինանսական հաստատությունները պետք է դյուրացնեն կանանց տնտեսական հզորացման հնարավորությունները, ինչպիսիք են միկրոֆինանսավորումը, մասնագիտական ուսուցումը և աշխատանքի տեղավորման ծառայությունները:
- ✓ ՏԻՄ-երը և տեղական ու միջազգային ՀԿ-ները պետք է հիմնվեն իրենց հնարավորությունների վրա՝ տրամադրելու նպատակային նախաձեռնություններ, որոնք կկապեն ՊՏԿ-ներին գոյություն ունեցող

աջակցության խմբերի հետ կամ կստեղծեն տեղահանված կանանց աջակցության խմբեր՝ օգնելու տրամադրել հոգեբանական աջակցություն և կանխել սոցիալական մեկուսացումը:

- ✓ ՏԻՄ-երի դպրոցներն ու մշակութային կենտրոնները պետք է աշխատեն խթանելու սոցիալական համախմբվածությունը և ներառականությունը՝ ստեղծելով կանանց համար հավաքվելու ապահով տարածքներ, նպաստելով «բախտակիցների» աջակցության խմբերին և խթանելով համայնքային միջոցառումներն ու տոնակատարությունները, որոնք միավորում են մարդկանց:
- ✓ ՀՀ կառավարությունը և տեղական ու միջազգային ՀԿ-ները պետք է քննարկեն համայնքային ՍԱ-ներին և ՏԻՄ-երին հատուկ ուսուցում տրամադրելու մասին՝ բացահայտելու պատերազմից տուժած կանանց, աղջիկների և երեխաների ընդհանուր սոցիալ-հոգեբանական կարիքները: Նրանք պետք է նաև վերապատրաստված լինեն նման կարիքներին համապատասխան արձագանքելու համար, օրինակ՝ սոցիալ-հոգեբանական աջակցության կամ հոգեկան առողջության համապատասխան/մասնագիտացված խնամքի ուղղորդումների միջոցով:
- ✓ ՀՀ կառավարությունը, ՏԻՄ-երը, տեղական և միջազգային ՀԿ-ները պետք է շարունակեն փնտրել տեղահանված կանանց հոգեկան առողջության խնամքի ապահովման ուղիները:
- ✓ ՏԻՄ-երը, տեղական և միջազգային ՀԿ-ները պետք է տրամադրեն խորհրդատվություն և հոգեսոցիալական աջակցություն՝ օգնելու կանանց հաղթահարել տրավմաները, զարգացնել ճկունությունը և վերականգնել իրենց կյանքի նկատմամբ վերահսկողության զգացումը:
- ✓ ՀՀ կառավարությունը, ՏԻՄ-երը, տեղական և միջազգային ՀԿ-ները պետք է դիտարկեն կանանց մասնագիտություններ դասավանդելու հնարավորությունը՝ ուսման ընթացքում ապահովելով ֆինանսական աջակցություն, որպեսզի նրանք կարողանան մասնակցել դասերին՝ չմտածելով իրենց երեխաների համար ֆինանսներ գտնելու մասին:
- ✓ ՀՀ կառավարությունը և ՏԻՄ-երը պետք է համագործակցեն այլ ոլորտների, այդ թվում՝ առողջապահության, կրթության և կենսաապահովման ոլորտների հետ՝ ապահովելու ամբողջական և ինտեգրված մոտեցում պատերազմից տուժած կանանց վերականգնմանն ու ինտեգրմանը:
- ✓ ՏԻՄ-երը, համայնքային ՍԱ-ները, ծառայություններ մատուցողները և համայնքի հովանավորները պետք է բազմաչափ և համատեքստին հատուկ մոտեցում որդեգրին պատերազմից տուժած կանանց վերականգնման և ինտեգրման համար՝ հաշվի առնելով նրանց բազմազան կարիքներն ու փորձը:

Գործողություններ՝ ուղղված թափանցիկության և ներառականության ապահովմանը.

